Hon. Rédaction
Revue Arménienne HANTESS
Mékhitharistes

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ԿԻՍԱՄԱՍԵԱՅ

Ազգային, Գրական եւ Բանասիրական

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԹԻՒ 5 ՄԱՐՏ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՆԻՄԱՍՏ ԹՏՈՒԹԻՒՆՆԵՐ 149
ԱՆԵՐԵՒՅԹ ՊԱՐՈՆԸ 155
ՏԷՐ ՔՆԱՃԻ ԲԱՇԿՈՒԹԻՒՆԸ (Մ. Նուպարեան) . . 163
ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻԼԻՈՆՆԵՐԸ (Գ. Խարասանճեան) . . 167
ՅՈՒՅԱԿ ՀԱՅՏԱՐԸՆ ՁԵՌԱԳՐԱՑ (Տ. Վ. Գ.) 171
ԱՒՏՆԻՆ ԳՈՐԾԵՐ (Սիամակ) 175
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ Է (Մինրդատ Պազարոսեան) . . 179
ՀՆԲՄՆԱԳԻՐ (Ռուսահայ. Խորհրդոյ) 180
ՄԵՐ ՆՈՐԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՆՆԵՐԸ (***) 182
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (Շահնուր) 183

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ (Թ. Քհ. Տ. Վարդանեան)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Դուռս ունի ստացած է

ՍԻՈՓՆԵՔ — Յովհ. Շահարէ. — Կ. Պոլիս տպագր. Պազտատալեան — Գին 1 դրուշ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ — 1897 — Հրատարակիչ Նշան Կ. Պէրպէրեան — Կ. Պոլիս գին 6 դրուշ

Հրատարակուած է Մամուրեան գրատան գրացուցակն և փափաքողաց ձրի կ'ուղարկուի։

Ամենք որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, պարտին երեւոյթ օրինակ խմբագրութեան հասցնել։

ԸՆՏԻՐ ՔՕՆԻԱՔ

ՍԱՄՈՍԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԽՈՂՈՂԷՆ

Ինչպէս Ծանօթ է ամենուն Սամոսի միութիւն դինին ալխաարհի վրայ կը գերազանցէ միւս բոլոր իր նմաններն, հետևապէս յոյժ խազդէն չվնասած ՓՕՆԻԱՔՆ ճշտօրէն համապատասխան քիմիական նորագոյն պահանջմանց, ոչ թէ միայն կրնայ մրցիլ Յունաստանի մէջ և այլուր, պատրաստուածներն թէ դնոյն և թէ տեսակին կազմէ, այլ նաև կրնայ առաջինն համարուիլ Եւրոպայի մէջ պատրաստուած բոլոր քօնիաքներէն։

Սամոսի մէջ հիմնեալ առաջին միակ հաստատութիւնն է այս գործարանն ուր չվնասած ՓՕՆԻԱՔՆ առաջինն է գուտ Միութեթ խազդէ։

Հետևապէս այս քօնիաքն իր գերազանցութեամբ արդէն հաչակ հանած լինելով, վստահ ենք որ Ազգայ Հայ հասարակութիւնն, անգամ մը փորձելով պիտի գընահատէ անոր գերազանցութիւնն և պիտի զգուշանայ ուրիշ քօնիաքներ գործածելէ, վասն զի մեր ՓՕՆԻԱՔԻ տեսակին մի է և չունի երկրորդական կամ երրորդական տեսակներ։

ՍԱՄՈՍԻ ՓՕՆԻԱՔՆ մեծ քանակութեամբ ունենալ փափաքողք պարտին դիմել միակ ներկայացուցիչներուն ի Զմիւռնիա, Կիրիա խան թիւ 48 Կ. Ցովէլ, Դ. Մարտիրոսեան և Ընկեր։ իսկ վաճրաքանակ գնողներն կրնան դիմել Հայոց թաղ՝ Պրն. Դ. և Լ. Շերիմաճեանի, ինչպէս նաև Շիշէճինեաց մէջ Մեծ. Դէորգ Քեչիչեանի և բոլոր չաքարավաճառներու մօտ։

Գիներն անհամեմատ աժան են մրցելու կարող հրապարակիս վրայ գտնուած բոլոր քօնիաքներու հետ։

Կ. ՑՈՎԷԼ, Դ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՒՒ ԸՆԿ.

Միակ ներկայացուցիչք
Թուրքիոյ Եգիպտոսի, Անգլիոյ և Միացեալ Նահանգաց։

Ց. Գ. Ա.ԲՆ անձն որ կը փափաքին վերջնականապէս երկրագործ տաղտուկ մէջ համաձայնութեան հաստատել Սամոսի Բանկատ գործակալութեան, կրնան դիմել Զմիւռնիոյ Ընդհ. Գործակալութեան վերջնոյ թիւ 48։

Ս. ՍԻՎՐԻԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿԷՐՈՒԹԻՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ԳԱՅԱԹԱՓՈՒԹԻՒՆ

Սոյն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամեն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր գաւառացին յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քալ գնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան դժալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ դոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ՝ ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել առղուստ յաճախորդներուն, և յատկապէս գաւառացնոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն դրուլ կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մերեանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

ՄԵԾ ԴԵՐԶԱԿԱՏՈՒՆ

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՉԻՉԵԱՆ

Ապակէվաճառանոց Եուսուֆեան ֆէրիանէյէն կէց, Թիւ 1

Վաճառատունս հաստատուած օրէն իվեր սուղ ժամանակի մէջ ունեցած բազմաթիւ յաձախորդներս, ապացոյց մի են թէ՛. մենք մեր յայտարարութեան հաւատարիմ գտնուած ենք, հարկ չիկայ. դովեստներ չռայլել. յայտ, մեր գործերը վկայ են արդէն՝ թէ դներու ժողանութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն մը ուրիշ նմանօրինակ հաստատութիւններէ ձեւի, կարի և ապրանքի մասին։ Երևակայեցէք թէ որչափ դժուարին է ամեն մէկ անհատի ճաշակը գոհացնել և ձեին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առաջին անգամ է որ հագուստ չինել կուտայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև պիտի աշխատինք ամեն ջանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ ամենէ բծախնդիրները անգամ գոհացընել։

Աւելորդ չենք համարիր. նաև իմացընել թէ վաճառատանս մէջ կը գտնուի քաղմիրներու, Փաուճներու և այլ տեսակ աուելիքներու ճոխ հաւաքածոյ մի, և թէ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Ձժան, ճեռաւոր եւ տակաւն, դիմեցեք եւ տեսէք։

18—24

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Աչխատասէր տէճ մի քիչ չատ տեղեակ Անգլ. Գաղղ. Իտալ. Յուն. և Տաճկ. լեզուաց և քիչ մ'ալ Տօմարագակալութեան դբաղմունք մի կը փնտռէ իւր ընտանիքը ապրեցնելու բաւական համեստ թոչակով։

Իզմիրէ դուրս դբաղման ալ կրնայ յարմարութեան պալ։

Դիմել առ խմբագրութիւնս

ԿՈՒԶԷՔ

Աժան, մաքուր և յաջողած լուսանկարներ ունենալ, դիմեցէք ի Հալէպի փողոց

ՄԱՐԱԹՕՆ

Լուսանկարչատունն, ուր՝ բնական մեծութեամբ ինչպէս մի՛չև մանրապատկեր փոքրութեամբ պատկերներէ զատ, խիստ չափաւոր գիներով կը շինուին նաև հանդիսական, զօրական, ընտանեկան, մտերմական, հարսանեկան և այլ զանազան կարգի խմբանկարներ. Գործատունէ դուրս եղած յանձնարարութիւնք ևս աւելորդ է ըսել որ փութով և զոհացուցիչ պայմաններով կը կատարուին։

Մրցում անկարելի է մեզ դէմ, քանի որ լուսանկարչական արուեստին երեք էական կէտերուն, այն է՝ բբերուն, թուն, և բբերուներէն մէջ մեր ունեցած մասնագիտութիւնն հարկ չմոռնալ պարզապիսները խարեբել համար ճոխ և հրապուրիչ արդուզարդերու դիմել, ինչ որ շատեր ի կիր կ'առնուն իրենց արուեստական թերութիւնները պարակելու համար։

Տէր եւ վարիչք Մարաթօն լուսանկարչատան

Դ. ՆԱԻՈՒՍԱՐԴԵԱՆ Ա. ԽԱՍԿԱԼԵԱՆ

Ի Հալէպ ի փողոց. — Ջմիւռնիա

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒԹԻՒՆ

Հայոց Դէպ Ընդ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Սրդոյ Հաստատութեան և մանաւանդ քաջ մեր Պատ. Յաճախորդներուն Թէ վերջերս մեր վաճառատունը խիստ ճոխացուցած ենք զանազան ուտեստներով։

Մեզ դիմողը ամէն ինչ պիտի գտնէ շատ աժան գիներով։

Ընդունինք նաև Ալիխարի և ուրիշներու քարտ օճառներ, նոյն գործատունները ծախուած գիներու վրայ ԱՒԱՆՑ ամենափոքր չափերգութիւն մ'ընելու։

Գիւրութեան համար մեր յաճախորդներուն հաշուետոմարներ կը յանձնենք և մեր սոլորութեան համեմատ հաշիւները տարին անգամ մը կը փակենք,

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱԺՆՈՒԹԻՒՆ 5—24

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՓԷ. ՏԱՐԻ

ԹԻՒ 5 1 ՄԱՐՏ 1897

ԱՆԻՄԱՍՏ ԽՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայն ոգւով հաւատարմութեան հակամէտ՝ սովորութեամբ խոտոռէր եղած է։ Այս ոգին ստացած է իր ևկեղեցիէն, որ ժողովրդ ային է, և ցորչափ այդ եկեղեցին հետևած է Աւետարանի մոտքեան ու սիրոյ պատուէրներուն և անոնց մէջ յառաջադէմ՝ հայութիւնն ալ այդ ոգւով անցած է՝ տարնապալից պարագաներու մէջ, անոր մէջ բարոյական արիւթիւն և մխիթարութիւն գտած է։ Կարգ մը հին ու նոր աղերու ընկերային կազմակերպութեան անմահ, հայութեան մարմինը գաստակարդ ական ու ազնուապետական խոտոռ թիւններ չունէր իր վաստանդ ի կայութեան մէջ, և ամեն անհատ՝ ինչ նիւթական ու մըտաւորական պայմաններու մէջ որ գտնուէր, իր նմանն, իր արենակիցը կ'նկատէր իբրև մեծ մարմնոյն, իր ևկե-

պէցւոյ անբաժան մի անդամն և եթէ ոչ առեալ նիւթա-
պէս, հոգևին անոր հետ հաղորդակցութեան մէջ կ'գըտ-
նուէր յատկապէս եկեղեցական պաշտօնեից ընտրու-
թեան առթիւ, այնպէս որ իր կրօնը հանրային համերաշ-
խութեան կեդրոնն ու միութեան գրաւականը կ'դառ-
նար, անկից քաղելով ոչ միայն կենսայ պայքարը անվըր-
դով մղելու ոյժ այլ և արտաքին յարձակումներու տո-
կալու կարողութիւն։

Այն օրն որ այդ ոգին թուլացաւ, այն օրն որ ընտա-
նեկան կապերը տկարացան, օտար սովորութիւններ մեր
մէջ մտան, նուկելուկ կրթութեան մ'անչահ մոլորմունքն,
մանաւանդ եւրոպականութեան հակումներ մեր բարուց
ու վարուց մէջ մուտ գտան, աւետարանական պարզու-
թեան և հաւատարմութեան զգայմունքն ծանր այլ զգա-
լի կերպով եղծանելով, հայութեան թէ ընտանեկան,
թէ ընկերական և թէ եկեղեցական այլ և այլ հիմնար-
կութեանց մէջ խարխլութիւններ, հերձուածներ երևան
եկան։ Ոչ միայն մի և նոյն երկրի հայեր իրարու հետ հա-
մակրութեամբ վարուելու ընտիր սովորութենէ հեռա-
ցան, ոչ միայն քաղաքի ու գիւղի հայեր իրարև օտարներ
սկսան իրարու նայիլ, այլ և աւելի լուսաւոր, աւելի զար-
գացած կեդրոններու մէջ բնակող տոհմայիններ, եթէ
ոչ յայտնի, կերպ մը թաքուն արհամարհանք սկսան տա-
ծել գաւառական ու շինական ազգակիցներու համար։

Անտարակոյս քաղաքակրթութիւն ըսուած գործու-
թիւնը պիտի բերէր և հայ տարրին այդ այլափոխու-
թիւնները, անտարակոյս գիտութիւն, լոյս, նոր ու օտա-
րոտի բարք ու վարք պիտի ազդէին և մեր կենսայ վրայ,
և կերպով մը ցեղային տարբերութիւն ու նահապե-
տական որոշ բնոյթ ու սովորոյթ պիտի այլայլէին ու չփո-
թէին, սակայն այդ յեղաշրջումներն այնքան ծանր ու
աղէտալի հետևանք չպիտի ունենային, եթէ անվթար
պահուէր այն ոգին, այն հաւատն որ մեր գոյութեան ու
վերկութեան խարիսխն է։ եթէ ուսմունքը, գիտութիւնը,
քաղաքակրթութիւնն ու հարստութիւնն ունին անդին առա-

ւեզուներ, ինչո՞ւ համար մեզ տային նաև այն փաս-
տաբղթական, աղնուապետական, ցուցամոլական միտում-
ներն՝ որ հայու թշնամի դանդաղ հատուածներու մէջ ցըր-
տուելիւն ու անտարբերութիւն յառաջ բերին, պարզա-
պէս այս դիւրաւոր պատճառաւ որ բարեկիրթ աղգերու
մէջ յանկարծ նետուելով՝ իրը չլացած վայրենիներ, չը-
տեսի կերպարան մ'առնուն, և փոխանակ եւրոպական
քաղաքակրթութեան յաջորդական յաղթանակներն ու-
սումնասիրելու, անոր աւելի վատ քան ընտիր մասերն
իւրացնելով՝ մինչև իսկ մեր էութեան հիմնական պայ-
մաններէը մոռցանք, մոռցանք այն հայացի յատկութիւն-
ներն ու եկեղեցական ընտիր սահմաններն, որոց վրայ
նոյն իսկ արևմտեան լուսամիտ գլուխներ կ'ըղմայլին
ցարդ, մոռցանք մեր ցեղ ու ցան աղգակիցներուն հետ
մեզ միացնող կապերն և կոյրզկուրայն հետևելու եղանք
այն չաւղին, որու ծայրն յաջողութեամբ հասնելու հա-
մար անձնազոհութեանէ և ինքնահաւանութեանէ
տարբեր միջոցներ անհրաժեշտ են։

Բնական ու հասկանալի է որ տգէտ ժողովուրդ մը լու-
սաւորութեան չվմամբ դէպ ի լոյս դիմէ, միացն ու սիր-
ալ զարգացնելու դիտամբ, եթէ չուզեր ինքնասպան
լինիլ, բնական ու հասկանալի է որ անուաշ ու պարզ աղգ
մը վտանգի՝ ժամանակիս պահանջումներուն համեմատ
իր նախնական կոչա սովորութիւններէն մերկանալ, իր
աւելորդապաշտութիւնները թօթափել իր դործունէու-
թեան միջոցները կատարելագործել իր յոգի հակումնե-
րըն ուղղել և իր հոգին լայն ու լուսաւոր հորիզոններու
համար բանալ, բայց մեզ զարմանալի ու անհեթեթ կը
թուի որ այդ ժողովուրդը տարագին հետ փոխէ և իր
աւանդական, պատմական ու ցեղային ընտիր յատկու-
թիւններն, այլակերպէ իր դաւանանքն և անխորհրդա-
բար բաժնէ ինչ որ պարտ է նոր ըմպերով միացնել ա-
ղօրացնել, խարխ ինչ որ նոր կապերով պէտք է վա-
գել ու ամրապնդել։

Աշխէն հայն իր տարուբերը կենայ բեմամբ ունի զա-

նաշան խարութիւններ, լ՞ինչ հարկ նորեր առեղծել։ Միթէ բաւական չե՞ն իր կեցուածքն ու բարուց մէջ մեռած այլ և այլ տարբերութիւններ, արդիւնք միջավայրի և օտարոտի կրթութեան, միթէ բաւական չե՞ն նոյն իսկ մեր դաւառական բարբառներու և գրական լեզուի մէջ սիրած անհամաձայնութիւնները, աղգային մարմնոյն անհաղորդ ու անջատ վիճակին հետևանք, հա՞րկ է նաև։ եթէ ալ հաւատոյ հիմնական մասանց մէջ լինէին, մեր եկեղեցական այլ և այլ իշխանութեանց մէջ խարութիւնները պնել կամենային, քանի որ բոլոր այդ իշխանութիւնները մի և նոյն ազբիւրէն կ՚բխին, նոյն հիմերն ունին, քանի որ լոկ պատմական դէպքերու առթիւ ծագած են, բայց մի և նոյն Գլխուն, նոյն Աւետարանին և նոյն եկեղեցական հաւատալոց ու կանոնաց կ՚հնազանդին։

* * *

Օրինակի համար, ժամանակէ մ՚ի վեր՝ կաւսակցական ոգւով կամ սխալ ըմբռնումով մեր եկեղեցական իշխանութեանց մէջ հակառակութիւն տեսնելու սովոր են կարգ մը մարդիկ։ Այս հակառակութիւնը հերիաթիկոսական, հերձուածողակա՞ն են թէ օտար, բնաւ երբէք, ոչ մին և ոչ միւսն են։ Նոյն հաւատան, նոյն աւանդութիւնները, նոյն ծէսերն ու արարողութիւնները ունին, բնչ որ ունի Մայր Եկեղեցի։ Տարբերութիւնը լոկ տեղական է ու պատմական։ Սակայն քառորդ դարէ աւելի է ա՛րքան թղթեր մրոտուեր, ա՛րքան վէճեր ծագեր, ա՛րքան կիր ու քար յուղուեր են հակառակութեանց թեր ու դէմ։ Մեր նպատակն բոլորովին հեռու է այդ անիմաստ խնդիրը պրպտել, որ միշտ պատուհասումներու առիթ եղած է։ Բայց որովհետև այժմ Սոյ կաթողիկոսի ընտրութիւնը կեդր. Աղթ. վարչութեան ուշադրութեան առարկայ եղած է, ներելի է մեզ յուսալ թէ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իր հեռատես իմաստութեամբ ու սուր խնայականութեամբ պիտի յաջողի ըստ օրինի անօրինել այս մասին ամեն բան, և հակառակութիւն անիմաստ և անելայնել խարութեանց վերջ տալ։

վարչական մարմիններն այնքան ռուխպատական դործեր ունին անօրինելու, առաջնորդական, անառակական, եկմտական, կրթական եւ Ագդն այնքան կարօտութիւններ ունի հոգալու, որ, իրաւի, յետին ծայր անխորհուրդ եւ ձեռնարկեր անօրէնութիւն մը պիտի ըներ ձեռնհաս իշխանութիւնն եթէ Սոյ Լանդրոյն նորօրինակ ուղղութիւն մը տալու ձեռնարկէր։ Սոյ Ամոսը պահել պահպանել իր նախկին դրութեան մէջ, ինչպէս կ'պահուի Աղթամարայ Ամոսը, Մայր Ամոսին իրաւասութեան դէմ դործել չէ, եւ ոչ եկեղեցւոյ հոգւոյն դէմ մեղանչել է քանի որ Հայ-եկեղեցին մի է։ Մեթէ նոյն հիման վրայ չըն դըրուած նաեւ մեր երկու Պատրիարքութիւնները՝ մին լոկ քաղաքային առաւելութեամբ, որ միշտ իրարու հետ հաշտ են, ինչպէս յունաց չորս Պատրիարքութիւններն, որ չորս հայրապետութիւն ըսել է։ Արեւելեան եկեղեցին չունի մարմնաւոր դլխաւորութիւն, այլ պաշտօնէութիւն, որ կրնայ մի քանի հատ լինիլ հաւասար ոչ-ընդդէմ կառուած, ինչպէս կառուած էին նախկին յրիստոնէութեան դանազան եկեղեցիները, որոց օրինակին կ'հետեւին յոյները ու հայերը։

Թէեւ ոչ ստուածադաւան եւ ոչ կրօնապէտ ենք, դոնէ այսչափ դիտենք վստահով որ՝ եթէ՝ ոչ Աղթամարայ, այլ Սոյ Ամոսը խորհ ու ապօրէն կ'երեւի կարդ մ'անհեռատես անձերու, պատճառն այս է որ կրօնական անհեթեթ նախանձայուզութեամբ վառուած՝ անկարող են նշմարել այդ դպացման հետեւանքը։

Պարտ է ըսել նաեւ՝ որ եթէ Սոյ Ամոսն ու Ամոսականն երբեմն վրդոված եւ մինչեւ անդամ բորբոքած են կեդր. վարչութեան դէմ, պատճառն եկեղեցական անկախութեան յաւակնութիւնը չէր, այլ պաշտօնէ արուած այն խորհրդական ու արհամարհական կարգ ապրութիւններն որով կ'յուսացուէր Մայր Ամոսոյ իրաւասութեան այժտալ, ընկճիացնալ ու Սոյ պատկան եկեղեցականներու մէջ խրամ մը բանալով, որպէս թէ մի և նոյն եկեղեցւոյ

զաւակներն, մի և նոյն կանոնադրութեամբ ձեռնադրուած և Աղբին սպասաւորելու սահմանուած պաշտօնեաներ չլինէին։

Եթէ մեզ պէտք են, ինչպէս ամէն կողմէ կ'պահանջուի, բարեկիրթ, բանիբուն և անձնուէր եկեղեցականներ, ինչո՞ւ համար չենելու տեղ աւերենք այն միաբանական հաստատութիւններն, որ՝ թէև դարաւոր կեանք ունեցած են, սակայն մերթ անխնամ՝ մերթ երկպառակ և միշտ անջատ մնալով աղգային հոծ մարմնէն, չեն ուռած անոր այն փափաքելի արդիւնքն որ իրենց պաշտօնավարութեան էական բաժինն է, այսինքն՝ բարոյական ու կրօնական դաստիարակութիւն մը վերատաղմել Սիոն ու Միաբանութիւնն, նոր հասոյթներ ճարելով և դրամական նպաստներ ընձեռելով, ընտիր մտաւակարութեամբ և ձեռնհաս անօրէնութեամբ ուսումնարան մը հիմնել, ինչպէս նաև Աղթամարայ վանքին մէջ որ նոյնպէս կարևոր կեդրոն մ'է, զաւառացի մանուկներ քահանայական պաշտօնին ընտրութեամբ պատրաստելու համար, այնքան կարևոր և թերևս աւելի նպատակայարմար միջոց մ'է ընտիր կրօնաւորներ յառաջ բերելու որքան ընծայարանի մը, դպրեվանքի մը հիմնարկութիւնը։

Մի և նոյն եկեղեցւոյ զաւակներուն մէջ՝ ո՛և է աշխարհային նկատումներով երևան եկած անիմաստ խզրտութիւններ և միաղլխութեան անհեթեթ միտումներ չուտ աւելի ծանր վնասներ յառաջ կ'բերեն քան թէ ըստ տեղոյ տարբեր, այլ ըստ դաւանութեան համանման ազգառնները, որոց հոգևոր յարաբերութիւնն ու միաբիւնն քրիստոնէական սիրոյ և եղբայրակցութեան մէջ կ'կայանան։

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՊԱՐՈՆԸ*

ՓԼՈՒՆԻ Փ·

ՀՆՏՈՒՐՐՈՒՆԱՑԱՒ ԱՑԼԱՆԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ատրիան լրին ու զարմանահար մտիկ ըրաւ այս տարօրէն պատմութիւնն և՝ թէպէտ չատ չփոթած էր, տրամադիր կ'ե֊ րևէր այս ամենը նկատել իրրև խելագար գլուխ մը ցնորքը։ Արդէն չատ բաներ լսած էր թազուն դիտութեանց, ինչպէս՝ ա֊ ռասաւած ատեսութեան ու հոգեխոսութեան վրայ, բայց որով֊ հետև չուտյտ կեանք մ'անցնելու սովոր էր, բնաւ ուշադրու֊ թեան չէր առած այդ տեսակ վարդապետութիւններ և բոլորն ալ խաբեայ ու չհամոզել անձերու քմծին հնարքը կ'համա֊ րէր։ Ծակայն ահա իր առջևը կ'պանէր մարդ մ'որ կ'պնդէր թէ քան ամեն ատուածատես ու հոգեխոս գեր ի վեր գործութիւն ու երկնային ներգործութիւն ունէր հոգիներու վրայ։ Այս պատմութիւնն՝ իրրև ցնորական, անհաւատալի կ'թուէր իրեն, բայց ինք այնպիսի ծանր վտանգի մէջ էր նոյն պահուն որ ա֊ մեն ազատուելի միջոց յօժարամիտ պիտի ընդունէր։ Հետևապէս յարմար գտաւ հարց ու փորձ ընել Ծովմանդոն որպէս զի հասկնայ թէ արդեօք կրնար իրական օգուտ մը քաղել անոր գաւանած այլանդակ վարդապետութենէ։

— Եթէ ձեր առաջարկն ընդունիմ — ըսաւ նա կամացուկ մը — թոյլ տալով որ հոգիս ձեր մանկոյն մէջ գայ բնակի, իմ յատուկ մարմինս ի՞նչ պիտի լինի։

— Ըստ երևոյթին՝ անկենդան պիտի մնայ, մինչև այն օրն ուր ձեր հոգին վերադառնալով զայն ոգևորէ։

— Ուրեմն նորէն այդ մարմնոյն պիտի վերադառնամ։

— Այո՛... այդ է իմ կարծիքս։ Իմ մարմինս վախճանն ստուգական է, ձերն՝ եթէ չեմ սխալիր, կրնայ քանի մը տարուց լինիլ. հետևապէս՝ հաւանական է որ դուք իմ մեռելի աճիւրքն Արդ՝ երբ ձեր հոգին գայ մարմնոյս մէջ բնակի, այս մարմինն ինձ սահմանուած ժամանակին չափ պահելէն ետև պիտի մեռ֊ նի, և ձեր հոգին՝ բնակարան չունենալով՝ պիտի տանջուի վե֊

* Տես, Ե. Ա֊ուր թիւ 4։

թոթին ձեր յատուկ մարմինը մանել, որպես զի իրեն յատկացած չրջանը բոլորէ։

— Ա՜յց եթէ հոգիս երկար տարիներ մնայ ձեր մարմնոյն մէջ, միթէ իմս չպիտի՞ քաշքաշի փախ։

— Ո՛չ . . . և պատճառն այս է որ թէև անկենդան . . . քը- նած պիտի լինիս Ասկայն եթէ բաղդն այնպես բերէ որ դուք իզմէ առաջ մեռնիք, ձեր մարմինը պիտի սկսի քաքայիլ, և այն ատեն իմինիս մէջ պիտի մնաք մինչև որ Աստուծոյ կողմէ որոշուած չուծման ժամն հասնի, և ձեր հոգին այնուհետև պիտի սլանայ ոդիներուս աշխարհն՝ իբր թէ ձեր յատուկ մարմնոյն մէջ մեռած լինիք։

— Կ'իմանամ — ըսաւ Աբրահամ մտախոհ — չատ հետաքրքիր գաղափար մ'է այդ։

— Ես չատ ալ չնորհակալ գաղափար մ'է . . . ձեզ համար — պատասխանեց Խոմմայր հանդարտութեամբ։

— Իսկ իմ մարմինս ո՞ր պիտի մնայ երբ հոգիս ձեր մարմնոյն մէջ բնակի։

— Այս տեղ մէջ — ըսաւ տօքտորն, ոտք ելլելով և դէպ ի վառարանը դնալով։ — Ոտվշեան վառանը կայ որ ազէտ մարդիկ իմ մարմինս կրկտեն՝ երբ հոգիս տարակայ գանուէր, հարկ էր զայն անքայթ տեղ մը պահել։ Ուստի մի քանի չաբաթուան համար տպատաւորս դուրս ուղարկեցի և չինել տուի գաղտնի սենեակ մ'որմէ բնաւ տեղեկութիւն չունին։ Երբ իմ աստղային մարմինս տանուլ ուզեմ՝ ծառայիս կ'ըսեմ թէ մի քանի օրուան համար քաղքէն պիտի մեկնիմ, որպէս զի իմ անեւոյթանալս տարօրինակ չգտնէք։ Այսպ ծածուկ սենեակս կ'մտնեմ, մարմինս հոն կ'թողում և ուզած տեղս կ'երթամ՝ առայդ լինելով որ իմ մեղկն պահարանս տպահով պիտի մնայ մինչև վերադարձս։ Միայն՝ երբ այս գիշեր դուք հոս մնաք, իմ մարմինս թողուցի նատած այս աթոռին վրայ, բայց ձեր ներկայութենէ իմ ֆիզիքական մասիս գաղիք վառնդն ոգիս ինձ ծանուցանելուն՝ իսկոյն ետ դարձայ ժամանակին որպէս զի եղբդ արդիւմ։

— Ո՞ր է գաղտնի սենեակը — հարցուց Աբրիան ոտք ելնելով, քանի որ այժմ վտտոք ունէր տօքտորին սլանդակ պատմութեան հատտալուս — Միթէ կարո՞ղ եմ զայն տեսնել։

— Անշո՛ւշտ. կարևոր է որ գիտնաք, քանի որ տպահովութեան համար այժմեան մարմինդ հոն պիտի թողուք։ Ահա նայեցէ՛ք։

Եւ նոյն պահուն՝ վառարանին վերեւն զսպանակ մը կոխեց մատովը, և իսկոյն բոլոր վառարանը՝ կերպ մ'առանցքի մը վրայ դառնալով՝ երեսն հանեց խոռոչ մ'որու մէկ կողմն ձիգ աստիճաններ դար ու վար խաւարին մէջ կ'իջնէին։ Ռովրոմայր կանթեղ մը վառեց և ձեռքն առնելով վար ծռեցաւ և այն քարայրն իջաւ՝ պատուիրելով Ասրիանի որ իրեն հետեւի։ Երիտասարդը պատուերը կատարեց և երբ սանդուղին ծայրը հասան, տոքտօրն ուրիշ զսպանակի մը դպելով քարեայ պատին մէջ, նորէն վառարանն իր առաջին տեղը շուրջ դարձուց։

— Ահա կ'տեսնէ՞ք, ոչ ոք վերի սենեկին մէջ կարող է զիտնալ որ մենք այս տեղ պահուըտած ենք, — ըսաւ Ռովրոմայր ժպտելով — հիմակ վար իջիք որ ցոյց տամ ձեզ այս բուրգին դաղտնիքը։

Ասրիան այս տարօրէն գործողութեան վրայ չուարած՝ տոքտօրին եւէն դնաց անձուկ սանդղէն իջնելով կաթեղին մարմրուն լուսով։ Բաւական քալելէն եւս՝ հասան քառակուսի փոքր նկուղ մ'որու մէջ երեք հոդի կարող էին կանգուն կենալ։ Նորէն Ռովրոմայր զսպանակի մը դպաւ և պատին մի կոտորը մեղմիկ մէկդի սահեցաւ՝ պարզելով իրենց աչքին բոլորովին մութ հետաւոր անցրպետ մը։

— Ահա ուրիշ դռուչութիւն մը, կը տեսնէ՞ք — ըսաւ տոքտօրը, ցոյց տալով երրորդ զսպանակ մը։ — Ո՞վ որ առաջին դաղտնիքը դտնէ, բնաւ չպիտի դուշակէ երկրորդը։ Եկէ՛ք։

Եւ տոքտօրն առաջ անցաւ կամարեայ նկուղին մէջ, և երբ անոր ծայրը հասաւ պատին մէջ դրուած փղոսկրէ ճարմանդ մը դարձուց և իսկոյն բոլոր սենեակն ելեկտրական զօրաւոր լոյսով մը փայլեցաւ։ Ասրիան հիացած մնաց և ձեռները բերաւ աչքին առջև՝ որ թանձր խաւարէ մը յանկարծ շողշողուն պայծառութեան դալով՝ սկսեր էին ցաւիլ։

Զարմաւոր լայնութեամբ սենեակ մ'էր այս, բոլորաձև և սպիտակ կամարեայ գմբեթով, զողխակոսի նշաններով նկարուած, իսկ կեդրոնէն կ'վառէր ելեկտրական բոցը կիսոմին դիմահար լոյն գունտի մը մէջ։ Տարօրինակ և փայլուն գոյներով օձաձեւներ կախուած էին պատերէն, և անոնց վրայ նկարուած էին եղիպտական կենդանի աստուածներ և հնդկական այլանդակ կռոց պատկերներ, իսկ գետինը փռուած կար խիտ ու փափուկ դորգի մը՝ կապոյտ, դեղին և կարմիր երանգներով չի-

ձուած տարօրինակ նմոյշ մը, որ անշուշտ ափիոնով մոլորած արևելեան երևակայութեան ծնունդն էր։ Սոյն այլանդակ ջրջիւղին մի կողմը կ'գտնուէր ցած մահիճ մը վագրի չքեղ մորթով մը ծածկուած, և անոր մօտ սատափէ դրուագուած մաւրիտանական սեղան մը, որու վրայ կ'երևէին կարմիր գինիով լի յուրան մը և մի քանի բաժակներ, նոյնպէս սպիտակ հացով ափսէ մը։

— Այս սենեկին դոյութիւնը մեզ միայն ծանօթ է — ըսաւ տոքթ. Ռովրամայր՝ իր բոլորտիքը գոհունակ ակնարկ մը նետելով — և ահա հոս կարող էք թողուլ ձեր մարմինը մինչև այն ժամանակն երբ իմ պիտի մեռնի, և երբ ձեր հոգին բնականապէս պիտի վերադառնայ իր նախկին բնակարանը. բայց որովհետև այնքան ժամանակ անպործ կամ անանուն մնացած մարմին մը կրնայ տարաբնաբ, այս գինին ու հացը մեծապէս պիտի կազդուրեն ձեր կենսական ոյժերը։

— Բայց եթէ երբէք՝ ձեր մարմինը չուտով մեռնելով, ես վերադառնամ իմ մարմնոյս — ըսաւ վշտահար երիտասարդն — այն ատեն պիտի ձեռքակալեն զիս։

— Այդ բանն, հարկաւ, բաղդէ կախում ունի — պատասխանեց տոքթորն՝ ուսերը թոթուելով։ — Ես ձեզ ահա ժամանակ մը համար թաքստոց մը կ'ճարեմ, և եթէ մարմինս մեռնելով՝ դուք այս ապաստանը կորսնցունէք, լա՛ւ, յանցանքն իմս չէ։ Բայց կարծեմ թէ կարող էք վստահ լինիլ այս մասին, վասն զի եթէ դիպուած մը չպատահի կամ դուք ինքնասպան չլինիք, իմ մարմինս դեռ մի քանի տարիներ այս երկրիս վրայ պիտի ապրի, և երբ այդ ժամանակէն առաջ մեռնի այն սպանութեանդ բոլոր յիշատակը պիտի մոռցուի և դուք նորէն ձեր մարմինը պիտի կենդանութեան բերէք, այս քաղքէն պիտի հեռանաք և իմ դրամովս պիտի ապրիք, վասն զի բոլոր ստացուածքս աղաւորէն ձեզ կ'թողում։

— Միթէ հարո՞ստ էք։

— Այո՛. Միջազգային դրամատան մէջ իմ անուանս դրուած առատ ու պատրաստ դումար մը պիտի գտնէք. բայց ասոր՝ դրամեզանիս մէջ գոհարներով լի փոքր տուփ մը կայ որ շատ մտակ կ'արժէ. հի՛մակ ինչ եկամուտ որ ունիք վոյմ չէ, քանի որ չեմ կարծեր թէ վնասուիք իմ մարմնոյս մէջ փոխադրուելովս։

— Բայց միթէ չէ՞ք ցաւիր բոլոր այդ հարստութենէ հրաժարելով։

Տօք. Ռովրամայր զուարճալի կերպով մը ծիծաղեցաւ, որպէս թէ Ադրիան ազգայական հարցում մ'ըրած լինէր, և իրօք՝ տօքտօրին տեսակէտով ազգայական էր այն։

— Ե՛ս, ե՞ս ցաւիմ — մրմնջեց նա — քանի որ այս ազգրմնկի մարմինս աստղային մարմնոյ մը հետ պիտի փոխանակեմ ... ե՛ս ցաւիմ, քանի որ երկրի կոչտ հաճոյից փոխարէն հոգեկան աշխարհի բերկրանքը պիտի վայելեմ։ Ո՛չ, չեմ ցաւիր այս փոփոխութիւնը ինձ համար պիտի նմանի մուրացկանի մը տեղափոխութեան, որով յանկարծ ստորին չքաւորութենէ արքայական ճոխութեան մէջ կ'մտնէ։

— Բայց մտածեցէք — ըսաւ Ադրիան լրջօրէն — եթէ ձեր առաջարկն ընդունիմ, նկատեցէք թէ ի՞նչ եմ ... ես ամէր մը գործեցի։ Ըստ երևոյթին՝ լաւ մարդ մը չեմ, իմ հոգիս ձեր մարմնոյն մէջ մտնելով շատ յիմարական գործեր կրնայ ընել, և այն ժամանակ իրրև մեղապարտ պիտի ամբաստանուիք։

— Ա՛յո՛, իմ մարմինս, այլ ոչ իմ հոգիս — պատասխանեց Ռովրամայր պաղատելամբ։ Ինչ որ գործէք իմ մարմնոյս մէջ՝ ձեր հոգւով քաւելու պիտի ստիպուիք, քանի որ ձեր աղտոտ կամքով պիտի գործէք և ոչ իմ կամքովս ... իսկ իմ անձնատուրութեան գալով՝ որու միջոցս հասցնելու կ'երկնչիք, բնաւ հոգ ըս չէ ... ես ամենևին չունիմ ազգական ու բարեկամ որոց իմ մարմնոյս մէջ ձեր ըրած գործերով միջոցս բերիք, իմ պատճառովս ինչ որ կուզէք կարող կ'ըլլաք ընել ... ես միայն իմ հոգւոյս հետ յարաբերութիւն ունիմ։

— Հապա ի՞նչ ունիք ըսելու ձեր անցեալ կենցաղի վրայ։

— Արդէն իմ անցեալ կենացս պատմութիւնը պատմեցի ձեզ։ իսկ եթէ աւելին կ'փափաքիք իմանալ, դրասեղանիս մէջ շատ թղթեր ունիմ, որոց մէջ իմ ամէն գործերուս կարող կ'ըլլաք տեղեկանալ Անգլիա գալէս ի վեր։ Իմ հնդկական կեանքս ձեզ անօգուտ է, քանի որ այդ կողմն վերադառնալու բան մը չունիք։ Ես գիտեմ ու մեծակեցցի համբաւ ունիմ, երբ իմ մարմնոյս մէջ բնակիք ամէն յիմարութիւններ կարող կ'ըլլաք ընել, բայց ահա կ'սպասարկեմ ձեզ թէ՝ որքան որ ձեր հոգին նորատի լինի, մարմինը ձեր է ու տակաւ, և եթէ անոր հետ խաղաք պիտի ըսպասենք գայն և այսպէս ձեր ապաւէնը պիտի կորսնցնէք շատ չուտ։ ուստի բոլորովին ձեզմէ կախում ունի ձեր ապահովութիւնը։

— Անցեալը դարմանելի անկարելի է — ըսաւ Ադրիան տրտ-

մագին — և թէև բարկութեան մի վայրկենիս ժէջ գործեցի ոճիրն, սակայն խղճի խայթը միշտ պիտի տանջէ զիս։

— Այդ ալ կերպ մը պատիժ է — ըսաւ Ռոմբոմայր լրջօրէն։ — Ես կարող եմ նոր մարմին մը տալ ձեզ այլ ոչ նոր հոգի մը. ուստի անցեալ կենաց ժէջ ինչ չարիք որ գործեցիք, անոր չիշատակը միշտ պիտի հալածէ ձեզ, բայց եթէ իմ և ձեր մարմնոյն ժէջ՝ աղօթքով և ապաշխարութեամբ երկրի վրայ ձեր ըրած յանցանքը քաւէք, ձեր հոգին պիտի մաքրուի հանդերձեալ աշխարհին համար։ Հիմակ՝ կարծեմ թէ ամեն բան պարզուեցաւ, ուստի եթէ այս մահճին վրայ երկննաք՝ իմ յաւուրկ հոգիս պիտի մերկանամ և ձեր հոգւոյն այլակերպութիւնը պիտի կատարեմ իմ մարմնոյս ժէջ։

— Վարկեան մը սպասեցէք — գոչեց Ատրիան, մահճին վրայ նստելով — ի՞նչպէս պիտի կարենամ չէթերու վրայ ձեր անունը ստորագրել և ձեր ձեռագիրն օրինակել։

— Այդ կարող պիտի լինիք մեքենապէս ընել — ըսաւ Ռոմբոմայր, որ փոքրիկ թռնիրի մը ժէջ կրակ վառելու վրայ էր — գրութիւնը մարմնոյ մի գործողութիւնն է, և չէ թէ հոգւոյ։ Չեմ կարող տալ ձեզ իմ գիտութիւնս, քանի որ այդ հոգւոյն կ'պատկանի և ինձ հետ պիտի տանիմ, բայց ինչ նիւթական ծանօթութիւն կամ ֆիզիքական ճարտարութիւն որ ատացած եմ, ձերը պիտի լինի, որպէս պի ըստ հաճոյս գործածէք . . . հիմակ պատրա՞ստ էք։

— Այո՛ — ըսաւ Ատրիան՝ հլութեամբ մահճին վրայ երկննալով — բայց ես խօսք տուած եմ Օլիվ Մընտրոս անուն օրիորդի մը հետ կարդուիլ — ձեր մարմնոյն ժէջ մտնելով ինչպէ՞ս պիտի կատարուի այն։

— Անտարակոյս ձեզ չպիտի ճանչէ օրիորդը — պատասխանեց տոքտօրն նշակակելի ժպիտով մը, հովահարելով կրակն որ նոյն պահուն սկսեր էր բորբոքելու։ — Պիտի պարտաւորիք ըսպասել մինչև որ՝ անոր հետ կարգուելէն առաջ՝ ձեր առաջին մարմնոյն ժէջ վերադառնաք . . . բայց այժմ խնդիրը ձեզ համար պարզապէս ապահովութեան խնդիր մ'է, ուստի լաւ կընէք եթէ սէրը մոռնաք, թէ ոչ ձեր կեանքը, սէրն և ամեն բան պիտի կորսնչէք։

Ատրիան տխրադին հառաչեց և գլուխը թեթև մը դարձնելով տոքտօրին պատրաստութիւնները դիտեց։ Այժմ կրակը մեծ կարմիր գոյն մ'ուներ, և հրատանն արդէն չուրջը ցա-

նուած ճերմակ փոշիէ բոլորակի մը կեդրոնը կ'գանուէր։ Տոքտօրը ծռելով դպաւ մատին ծայրովն այդ փոշին և մի քանի բառեր մրմնջեց. և իսկոյն լափ,իլոզ բոց մը ցայտելով այն բոլորակին շուրջը դարձաւ։ Այն տեղն Ռովրոմայր արծաթէ փոքրիկ տուփէ մը հանած խոտեր կրակին վրայ թափեց, և ապա թևերը բարձրացնելով մեղմ ձայնով տեսակ մը օրհներգ երգեց։ Այդ ահարկու և յետին ծայր բարբարիկ երգը մեծաւոր ափերու վրայ ելնող իջնող դաշնակաւոր կոհակներու կ'նմանէր, և խիտ սպիտակ մուխ մը թանիրէն վեր ելնելով գալարուն՝ նկուղին մէջ կծու հոտ մը սփռեց։

Պահ մ'եաք՝ Ռովրոմայր՝ որ մեռային քօղին մէջև այլանդակ ու ճիւաղային կերպարան մ'առած էր, դադրեցուց իր երգն և երիտասարդին մօտ գնալով հանդիսաւոր խօսեցաւ այսպէս։

— Ահա կ'պատրաստուիմ թողուլ այս աշխարհն որ ոգիներու բնակարանը ուղևորիմ, իսկ իմ մարմինս կ'յանձնեմ հոգւոյդ պահպանութեան . . . . Լաւ գործածէ զայն, վասն զի ինչ որ ընես ազատ կամքդ ըրած պիտի լինիս և քու յատուկ ոգւովդ պիտի քաւես։ Միթէ պատրա՞ստ ես և սիրայօժար կ'ընդունի՞ս այս բեռը։

— Պատրաստ եմ — պատասխանեց Ատրիան մեղմ ձայնով մը։

— Ուրեմն դուէ աչերդ — հրամայեց Ռովրոմայր հրանոցին մօտ գնալով։ — Մնաս բարև, և երանի թէ աղօթքով, գղջումով և ապաչխարութեամբ մաքրուէր այդ հոգիդ որ մեղօք ապականուած է։

Այս պատուէրին հնազանդելով՝ Ատրիան աչերը դոցեց և ղդայ մուխին բարկ հոտն որ ռնգունքը կ'խտղալին, մինչդեռ տոքտօրը վերստին սկսաւ իր դաշնաւոր երգը։ Այս տարօրէն մեղեդին՝ որ մոլորուն ոգւոյ մ'ողբագին ձայնին կ'նմանէր՝ կարծես թէ հետզհետէ կ'հեռանար, քանի երիտասարդին ղդայարանքը սենեկին մէջ սփռուած մուխով կ'ամպոտէր։ Յանկարծ ղդաց որ իր բոլոր մարմինն յետին ծայր նեղութեամբ կ'դալարէր, կարծես թէ ամեն դնդերքն ու ջիղերն իրարմէ կ'անջատուէին, և Ատրիան սարսափահար՝ ջանաց ազատակել, բայց անկարող եղաւ։ Այնպէս կ'թուէր որ կրակը բոլոր մարմինը համակեր էր, իր ֆիզիքական պատեանն այրելով, և կ'ուզուէր կ'գալարուէր տաղնապալից տանջանաց մէջ, մինչև որ թանձր խաւար մը կարծես իջաւ իր ուղեղին վրայ և իր յիշողութիւնը բոլորովին կորսնցուց։

Որքան ժամանակ տևեց այս թանձր խաւարը բնաւ չդիտցաւ ետ, վասն զի երբ նորէն աչերը բացաւ ինքզինք պառկած գըտաւ պետինը հրանոցին մօտ, որու մէջ բոլոր կրակը մարեր էր։ Պզտ օդ մը կ'րանէր նկուղին մէջ. Աարիան գետնէն ոտք ելաւ և յանկարծ սոսկալի սպառում մ'զգաց տեսնելով որ իր մարմինը գունատ ու անշարժ, մահճին վրայ պառկած էր, մինչդեռ ինք՝ իր վրան գլուխը քննելով դիտէց որ Ռովրոմայրի դիւերայինն հագուստին մէջ ամփոփուած էր։ Աղաղակ մ'արձակելով՝ որ իր յաւուրկ ձայնին պէս չէր հնչեր, դէպ ի հայլի մը գնաց՝ որ պատէն կախուած էր և շտապարար ետ ետ քաշուեցաւ, վասն զի հայլիին մէջ երևցող դէմքն իր գեղեցիկ դէմքը չէր, այլ Ռովրոմայրի ալեւոր խորշոմած երեսն, ոչ ևս հանդարտ ու խաղաղ, այլ ահարեկ ու վշտահար։

Այլակերպութիւնը կատարուած էր։

Աարիան՝ ասք. Միշէլ Ռովրոմայրի մարմնով՝ դէպ ի սեղանը դիմեց դանդաղօրէն, արդէն զգալով թէ որքան մեծ էր տարբերութիւնն իր երիտասարդութեան և արդի ծերութեան վիճակին մէջ, և բաժակ մը գինի լեցնելով խմեց։ Ապա իր յաւուրկ մարմնոյն նայելով, որ այնքան հանդարտ կ'հանգչէր մահճին վրայ, անոր թևերը ծալլեց կուրծքին վրայ, ճրագը վառեց և ելեկտրական լոյսը մարելէն ետև՝ նկուղէն դուրս ելաւ։

Շուտով գտաւ ճարման դէպ ի վերին սենեակը՝ գաղտնի զսպանակները մեքենագէտ գտնելով, ասպա վառարանը դարձուց և իր առաջին տեղը բերաւ. ճրագը մարելով սեղանին վրայ դրաւ, և վերջը ծանրի գալով երկար ու ջերմագին ազօթեց։

Այս վիճակին մէջ Աարիան ապահով էր, քանի որ իր մեզապարտ հոգին Ռովրոմայրի մարմինը ժառանգեր էր, իսկ իր արտաքին կերպարանն, որով անտարակոյս պիտի ներկայանար, ատորին սենեակին մէջ ապահովապէս թագուն կ'մնար։

Ահաւասիկ եղած էին այդ դիւերուան դէպքերն, և Աարիան իր հոգւոյն կրած ազետալի հարուածներէն հալումաշ, դէպ ի անկողին մը գնաց ծանր ծանր, նետեց ինքզինք անոր մէջ և շուտ մը քնացաւ։

ՏԷՐ ՓՆԱՅՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ*

Եղանակն էր երթալ այց մը տալու Ուրիջոֆընի հռչակաւոր երէց Վերապայծառ Սեպաստիէն Փնայրի, զաղանի սենեկապետ Լէօն ԺԴ. Պապին։ Տէր Փնայր — զայս անլսել աններելի է այսօր — Պապերայի ամենօր քահանայ մ'է՝ հեղինակ բժշկական նոր դրութեան մը՝ որուն հիմը կը կազմեն ցօղի մէջ բոպիկ չրջապատութիւնները։ Ամիսկ ընթացիկ կերպով կ'ըսուի, կը հաւատացուի, կը տպուի, ու վերջապէս ճշմարտութիւնն ալ ա՛յդ է՝ թէև ժամը ինչ պարզուած։ Եթէ մարդ կ'ընդունի պիւրաւ թէ վատառողջ ու նոյն իսկ անախորժ բան մը եղած չըլլայ ամառուան գաղջ առաւօտներ անմռճակ ու անդուլայ կոխտել խնամով մաքրուած մարմանդի մը գալարիքը, այլ սակայն դժուարը կուգայ համոզուիլ թէ՝ ինչ օգուտ ու ի՛նչ հրապոյր կրնայ ունենալ ամեհ ատեն ու ձիւնի մէջ նոյն մարդանքը կատարել։

Ուստի՝ իմանալ թէ Մաունիխի մօտ Ուրիջոֆընի մէջ բազմաթիւ հարիւրաւոր հիւանդներ այս յուրտ եղանակիս Փնայրեան դարմաններով կը խնամուին՝ նոյն իսկ Տէր Փնայրի առաջնորդութեան տակ, ու չերթալ չտեսնել թէ ի՞նչպէս կը կատարուէին այս ամէն բաները՝ ընդհանուր հետաքրքրութիւնը ի դերև հանել ըսել կ'ըլլար։

. . . Ուրիջոֆըն Մաունիխի բուն կամ չրջավայրերուն մէջ չէ, հոն երթալու համար Լինտօ գացող չոգնակառքը պէտք է առնուլ։ Երկաթուղին ամայացեալ երկիր մը կը պարզէ ուղեւորի աչքին, ալ ու ձախ անբաւ ճահիճներ կը տեսնուին՝ այժմուս սառած ու ձիւնապատ։

Մաունիխէն 77 հազարամէթր անդին գլխաւոր գիծը թողլով՝ կը մտնես երկթարաչարժ կառքի մը մէջ՝ որ գքեզ Ուրիջոֆըն գիւղը կը հանէ չուրջ 10 հազարամէթր հեռուն։

---

* Այս հատուածը թարգմանուած է Էլէուդրաֆէն պատկերազարդ հանդեսեն։ Դիտաւորութիւն ունինք Փնայրի բժշկական դրութիւնը ար ա՛շխատ մեծ հռչակ հանած է, բացատրել առանձին յօդուածով։

Օդագնաց թելով այս կտորը առաջին գարմանք մ'է ըստ ինքեան։ Աւանդավէպէն տարրե՛ր Ուորիւֆիլըն ու տարրեր Ֆնայր մը չիմի կերպով կը նշմարես արդէն։ Յուսադրեա հիւանդներ՝ առաջնորդելու համար ելեքարաշարժ խոխոջրիչ հարկ կա՞ր միթէ՝ հիւանդներ որոնք պաշտօնական բժիշկներու առաջ խնամքներէն հրաժարած՝ ծերունի ժողովրդապետին երիցատունը կը դիմեն՝ իրենց վերջին յոյսը անոր վրայ դրած։ Չո՞ւ հասնողին աչքին ճշմարտութիւնը կ'երևնայ նոյն հետայն։ Բաղմաձեայ մրցումէ ետք՝ յաղթանակի ժամը գարկած կ'երևի Տէր Ֆնայրի համար . . . ։

Ուորիւֆիլըն՝ Պսիխերական այն պարզ աւանը բաղանեկան կեան մ'եղած է կարեւոր, ու Տէր Ֆնայրի ծխականք լքած են վարուցան՝ բաղնորդներու դործերը տեսնելու ու անով իրենց տրուստը հաներու համար։

Մեզ ըսուածը ճշմարիտ էր թէ Ուորիւֆիլընի մէջ տարւոյն ամեն եղանակին բաղնորդներ կը գտնուին։ Հապա թէ թրամվէյէ եկած՝ ամենէ տարօրինակ տեսարանը կը պարզուի աչքիդ, յանկարծ դիմացդ կուգայ անհեթեթ ամբոխ մը՝ նորեկ բազմութիւնը տեսնելու համար կայարան վազած — այր, կին՝ բոկոտն ու մերկապուխ կուգան կը շրջապատեն զքեզ, կայարանի դարափը (quai) կը ճեմեն մեծաքայլ ու շրտում կը պատճառեն իրենց երթևեկելով, այլանդակ գնացքով ու երևոյթով։

Կայարանէն դուրս ելլելուդ՝ ահա նորեր դիմացդ կուգան կամ առաջ կ'անցնին քեզմէ, շուտ շուտ քալելով ու վազելով գրեթէ։

Տարիքի, սեռի, ընկերական վիճակի համեմատ հագուստները կը փոխեն, այլ անխտիր այս բոլոր բաղմութեան ոտքերը բոպիկ են ու ոմա՛նց միայն տրեխով պատսպարուած, տալտատ ու չրպզկատ վե՛ր ածած ինչուան ծունկը, գլուխը բայ կամ թեթև քաշքշոմ մը ծածկուած։ Ու նշանակեցէ՛ք թէ ջերմաչափը ղերոյէ 5 աստիճան վար կը ցուցնէ, ու թանձր ձիւնախառն մը պատած է երկիրը։

Կայարանի ճամրուն երկայնքը առու մը կը հոսի՝ իր արագագաց գնացքով սառուժէ զերծ մնացած։ Ո՛րքան մեծ կ'ըլլայ զնորմանգդ՝ տեսնելով չոլ բաղնորդներէ մին՝ որ ձկնորսի հագուստով կը քալէ մեծաքայլ՝ ոտքերը, սրունքները (tibias) և բուռերը (mollet) և սառնացեալ ջուրի մէջ ու դոհունակ ժպիտ ի չրմունս։ Պիտի կարծես թէ նա խենթ մ'է, թէ ամենքը

խեղճ են, և թէ խեղճերու դիւղ մը կը գանուիս՝ Ո՛չ բնաւ։ Ուօրիչօֆքընի մէջ դարմանուողք բաղնորդներ են անոնք։

Առաջին տպաւորութիւնդ այս է։ Գիւղին՝ որ պզտիկ քաղաք մը դարձած է այսօր, չէնքերն են յարդատանիք, շէներ՝ բազմաթիւ պատուհաններով ու կանաչ վեղկերով։ Հոս հոն նոր ահագին կառոյցներ, պանդոկներ, բաղանեկան հաստատութիւններ։ Շատ փողոցներու մէջ վաճառատուններ՝ ուր ամենայն ինչ Վնայբեան դրութեամբ է, հաց, դարեջուր, հագուստ, կոշիկ, արեխեր եւ եւ։ Եւ Վերապայծառ Վնայբի (իբր Ս. Պապի գաղտնի սենեկապետ՝ նա այս բարձր սիստղոսին իրաւունք ունի) պատկերը ամեն տեղ կանդնուած՝ ամեն տեղ ի ցոյց դրուած է . . . ։

Առտուան ժամը տասն է։ Ամեն օր իննէն ինչուան տասն և մէկ, ու կ՛սօրէն եաքն ալ երեքէն մինչև հինգ՝ Տէր Վնայբի բժշկական խորհրդակցութիւնները տեղի կ՛ունենան՝ միշտ ծրիւ Հիւանդները կ՛ընդունուին էրիկ մարդոց դարմանատան (Kurhaus) մէջ։ Ի Ուօրիչօֆքըն ուրիշ երկու դարմանատուն ալ կայ, մին՝ կանանց, միւսը տղայոց։ Այս դարմանատունը բանեցնողներն են Ողբմութեան կարգի եղբարք։ Նօթանասուն և երկու սենեակ ուի այն՝ որը վեց ֆրանք ֆոշակալինով։

Ուսսաի Տէր Վնայբի դիմել ուզողը արանց դարմանատունը կը դիմէ՝ 3 ֆրանք 75 սանթիմի մասնաւոր գրքոյկ մը ծախու առնելէ եաք։ Այս գրքոյկը՝ մէկ շատ տպագիր խրատներու մէջտեղ՝ կը պարունակէ ապիտակ էջեր՝ ուր պիտի արձանագրուին ժողովրդ ապետին բժշկական պատուէրները՝ իւրաքանչիւր հիւանդութեան համեմատ։

Հիւանդները կարգաւ՝ երկու երկու՝ խորհրդակցութեան սենեակը կ՛առաջնորդուին։ Վերապայծառ Վնայբ՝ որ երկար ժամանակ դատաստանի մատնուեցաւ իր ապօրինի բժշկութիւն վարող, իրեն օգնական առած է մէկ շատ բժիշկներ ու եղբայրներ՝ որոնց մէջ պէտք է յիշել եղբայր Ռէյլը՝ իր նախամեծար աշակերտը՝ որ պիտի յաջորդէ իրեն Ուօրիչօֆքընի ժողովրդ ապետը Ողբութեան և վեց տարուան է այսօր։ Իր մանրիկապոյն պարեգօտին մէջ աչքոյժ ու կայտառ՝ կեանքի փողանք (réclame) մը կը հանդիսանայ իր բժշկական մեթոտի պատուականութեան։ Եթէ բոպիկ չքաւոր ինք՝ պատճառն այն է որ զերազանց առողջութիւն մը կը վայելէ, այլ ակայն նա

կը պատմէ մեծագիւր թէ ի՞նչպէս երիտասարդութիւնը մէջ ջըրթարուժութիւնը ազատած է իր կեանքը՝ որպէս զի ինքն ալ եաքէն կարող ըլլայ մէկ չատ կեանքներ փրկել ջրթարուժութեամբ։

Երբ հիւանդութիւնդ կը պատճառ երէց-բժիշկին՝ նա իւյն դրբոյկիդ մէկ ճերմակ էջը դիրերով կը լեցնէ։ Դիրբիդ կամ հարստութեանդ աստիճանին համեմատ՝ նշանակեալ ըստացուածը (traitement) կրնաս չարունակել դարմանատան մէջ, բաղնեկան հաստատութեան մը կամ ընտրած մէկ պանդոկիդ մէջ, և կամ՝ Ուրիշօֆըն հետս՝ նմանօրինակ հաստատութիւններէն մէկուն մէջ, հաստատութիւններ՝ որոնք բազմացած են ի Գերմանիա, ի Զուիցերի, ի Պելժիքա և ի Ֆրանսա։

Հարկ կայ նկարագրել հոս Ինայրի դարմանումը. ընդհանուր կամ մասնաւոր լոգանք, ջրհեղք (affusion), կոխանք (compresses), տեսակ տեսակ մարզանքներ *։ Ցիշենք միայն Պավիէրացի ժողովրդապետին մեծ ու պզտիկ երկերը, իմ ջրթուխըննո, իմ կոպո, եւ այլն։ որոնցմէ հարիւր հազարաւոր օրինակներ տպուած են։ Պէտք չէ մոռնալ որ պիս Ուրիշօֆըն առաջնորդողը չէ թէ որ և է հիւանդութիւն էր՝ այլ բանին նկարագիր կողմը միայն։

Եւ ի՞նչ կայ աւելի նկարագիր քան Գերապայծառ Ինայրի հնդժամեայ բանախօսութիւնները։ Ձմեռ առեն ընդարձակ սրահի մը մէջ կը կատարուին անոնք՝ ամեն կարգէ ու ամեն տղէ ունկնդիրներու դիմաց, հրեայ սեղանաւորը խոնարհ վերէցին քով, ռուս իշխանուհին Պավիերացի գեղջկուհիի մը քով ոտքի վրայ կեցած։ Ուրիշօֆըն բոպիկներու բուն թափառութիւնն է՝ ուր Ջոչիւսի տաքը դիմութեամբ դարմանատուն ընդունուած խեղճ աղքատն աւելի լաւ մուճակուած չէ։ Գեղեցի՛կ եղանակը դալուն պէս՝ այս բանախօսութեանց

---

* Տեր Ինայրի ջրաբուժական դարմանումին՝ ուրիշ բազմաթիւ ձեւեր ալ ունին՝ որոնց երեքն կը միացնէ նաեւ ներիին դեղատուութիւն՝ ամենապարզ բուժախոտով (simples)՝ ուր թունաւոր կամ կարի բուռն տունկեր մտած չունին բնաւ, եւ որոնց յատկութիւնները՝ ստեպ ամծամօր՝ ճանաչուած եւ ուռուցանուած է մեր բանական բժիշկը։ Այս ամենը պիտի բացատրենք մեր պատրաստելիք յօդուածի մը մէջ։

կարգաւորութիւնը կը վոխարկի Եվիկ – ժողովրդապետը դուրս՝ բաց օդին կը կատարէ զանոնք, գեղջկական անկիւն մը կը հաստատուի հոն՝ ուսկէ առողջաբանութիւն, ջուրի բուժիչ յատկութիւններ, բուժախուռերու վրայ պիտելիքներ խայտապուռն բազմութեան մը պարզ ձեռվ կ'աւանդուին . . . :

1892 ին արդէն երեսուն հազար հիւանդներ Ուորիշօֆըն կ'գիմէին բոյժ ու դարման վնռտելու։ 1896 ին այդ թիւը բարձրացաւ վաթսուն հազարի՝ որոնց քսան հազարը Ֆրանսացի։ Աւոնցմէ օրքանը բուժուած վերադարձան խիստ դժուար է ճիշտ հաշիւ մը հանել, ուստի թիւերով չդիւրի խօսինք։ Արձանագրե՛նք միայն Տէր Ֆնայրի սա հաւատաց յայտարարութիւնը. «Ջուրն ըստ ինքեան անմահութիւն պարգևելու յատկութիւնը չունի»

Եվիկ Ուորիշօֆըն դացած ես չէ թէ դարմանուելու՝ այլ հետաքրքրութիւնդ լեցնելու համար միայն երկար ատեն մնաց հոն, քանզի խիստ անշահ են պանդոկները։ Ֆնայրեան ապուրը, Ֆնայրեան հացը անուտելի բաներ են, իսկ Ֆնայրեան գարեջուրը պարպուցէս անըմպելի։ Ու գէշն այն է որ ուրիշ գարեջուր, ուրիշ ապար և ուրիշ հաց չէ կարելի գտնել հոն։ Մերկ ու կապտորակ ոտքերու ու բուռերու տեսարանը՝ որ ի սկզբան զուարճալիք մը երևցած էր, վերջէն նեղացուցիչ կ'դառնայ։ Տարօրինակ մարդը դո՛ւն ես քու կօշիկներով ու մինչև առնարմուկ իջնող տափատով։ Փաթիր Ուորիշօֆընէն ու ա՛յն տաեն միայն դարձիր հոն՝ երբ սատմոքդ խանգար՝ մկրճգ քայքայուն՝ ջիղերդ ախտաւոր՝ չատ մը անօգուտ դարմաններէ եռաք կ'ուզես Տէր Ֆնայրի ջրաբուժական մեքոտը փորձել՝ որ թերևս վնռտած առողջութիւնդ ընձեռէ քեզի . . . :

Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԼԻՈՆՆԵՐԸ

Բարեկենդանը սկսաւ և կ'շարունակուի ինչպէս ի Բարիզ՝ նոյնպէս աշխարհիս ամեն կողմը՝ այսինքն ամեն այն տեղերը ուր քաղաքակրթութիւնը պարելու արուեստին շատ և ազդեցիկ հանգչներ միացուցած է։ Բայց պէտք է ընդունիլ որ այս մասին ինչպէս նաև շատ բաներու մէջ՝ թէպէտ Ամերիկա-

ցիք մեր վարպետները չեն, սակայն Պրէսթէ Նիւ–Եօրք ընդ–ծովեայ պարանին երկայնութեան չափ մեզ կ'ոգեւորանցնեն Նիւ–Եօրքի լրագիրները որ այս տարուան թարեկենդանի առթիւ եղած խնջոյքներու լուրերով լի են։ Եւ կ'յուսամ թէ այս բարեկենդանը փարթամ եանքիներու համար ամբողջ տարին կը տրէ։ Անոնց մէջ մրցում մը կայ թէ ո՞վ աւելի առատօրէն պիտի սփռէ իր փալաչները, իր հրաւիրեալներուն երեկոյթներ, խնջոյքներ և ընդունելութիւններ տալու համար՝ որոնց բազմատեսակ մեր ամենէ չքեղ պարահանդէսները, մեր բարձրագոյն դասուն լաւագոյն կազմակերպած գրօսանքի ընկերութիւնները՝ հասարակ խանութպաններու պարզ գրօսանքներ կ'համարուին։

Այս խնջոյքներու առաջին զարդը կ'կազմեն ծաղիկները։ Ամեն կողմ թէ սուղ, թէ դեղեցիկ և թէ հազուագիւտ ծաղիկներ կ'գնեն առատօրէն։

Հիմա ծաղիկները մեծ դեր ունին Նիւ–Եօրքի մէջ, տարին 15—20 միլիօն ֆրանքի կ'ծախսուի առանց հաշուելու անհատներու ջերմանոցներէն առնուածները։ Կ'իմանամ որ մօտերս հարուստ Ամերիկուհւոյ մը հարսանիքին միայն ծաղիկի համար 200,000 ֆրանք ծախսուած է, միւս ծախքերն ալ պատմածներէն։

Գոհիլեօններու մէջ միտանակ մեր դասական կազմածքներու (accessoire) նուէրներ կ'բաժնեն որոնց մեծ մասը թանկագին զոհարներ են։

Պարահանդիսի մէջոցին կամ վերջը տրուած հացկերոյթները — թէ կերակուրները և թէ գինիները — ամենէ սուղ տեսակէն պէտք է որ ըլլան։

Հացկերոյթի մասին՝ վերջին նորամուծութիւնն է բարեկամները ճաշարան հրաւիրել։ Նիւ–Եօրք երեւելի ճաշարաններ կան ուր ամեն իրիկուն հարուստները կ'ժողովին և դրեթէ քիչ շատ տղկ կ'ճաշեն մարդ գլուխ 12 տօլար կամ 60 ֆրանք վճարելով։

Բայց ի՞նչ կարեւորութիւն ունին այս ընթրիքները, երբ չենք թէ անցեալ տարի տասն և հինգ հոգիէ բաղկացեալ հացկերոյթ մը տրուեցաւ և 90000 ֆրանք վճարուեցաւ։ Միայն հրաւիրեալներու նուիրուած ճաշու ցուցակները (menu) երեք անուանի արուեստագէտներ գծած էին, և 15000 ֆրանք կ'արժէին։

Ladies' Home Journal երեկոյթի մը վրայ կ'խօսի որու համար 70000 փոլը կամ 350,000 ֆրանք ծախք գացած էր։

Իսկ հարուստները եթէ զրօսանք մ՚ուզեն մասնաւոր վկթով ուղեւորութիւն կ՚ընեն, որ կաշնատէրին սեփականութիւնը պէտք է որ ըլլայ, և եթէ արուարձանները բանող երթղթ կարգի վկթ մը մեր ըսդրպուռն կոչուած վկաններուռն կարենայ նմանիլ, այս վկաններն ալ այն տեղն մերիններուն հետ կրնան համեմատութեան դրուիլ։

Նիւ-Եօրքի երկրիւղնատէրերու վկիններէն բուն թաւալուն պալատներ են, և ոչինչ որ կ՚պահանջէ արդիւդիւրութեան, հանդստի և պերճանաց բոլոր պէտք եղածները։

Փօրնէլիոս Վանդէրպիլթի քեռայր՝ Պ. Ծէրվար Վէյլի վկինը 79 ոտք երկայնութիւն և 15 ոտք լայնութիւն ունի։ Ներս մտնելու համար դարատափ մը (terrasse) կայ ուր եղկդեայ սիւտներ և սեղաններ չարուած են, անկից կ՚անցնուի սրահը բոլոր հայելիներով զարդարուած, պշաւոր դաշնակ մը, պատուանկաւոր թևաթոռներ և ամեն անկիւնները ճարճատան սեղաններ՝ որոնց վրայ թանկագին անօթներ դրուած են։ Ձկ կողմը դուռ մը կայ որ երկայն դահլիճի մը վրայ կ՚բացուի ուր կ՚գըտնուին տասը սենեակ։ Պ. Վէյլի սենեակը Փօրտուի կաչիով կահաւորուած է, իսկ Տիկին Վէյլինը մութ կապոյտ թաւիշով։ Կայ նաև ձերմակեղէններու սենեակ մը՝ սքանչելի դարաններով ուր կ՚դնեն ղրնտոները, մարմարեայ լոզարան մը, բաւական ընդարձակ խոհանոց մը և երկերկու անկողինով սպասաւորի յատկացած երեք սենեակ։ Այս վկինը 800,000 ֆրանք կ՚արժէ և ճիշտ Պ. Վանդէրպիլթի վկանին կ՚նմանի։

Պ. Սթանքօրդալ վկին մ՚ունի որու մեն կողմը, անիւներէն սկսեալ մինչև ձեղունը՝ ոսկեզօծեալ է։ Ծօրժ Կուլտ իւր վկանին մէջ գրատուն մը և գինուց սրահ մը դրած է, Վերջապէս Ինչար Մանհաթիլտ երեւելի դերասանը վկին մ՚ունի որու մէջ կատարեալ թատրոն մը զետեղած է։

Զրօսանաւերով պատմուներ կ՚ընեն, որոնք ծփուն պալատներ են։

Կրնանք ըսել որ Նիւ-Եօրք բաւին բուն նշանակութեամբ զրօսանաւերու նաւահանգիստ մ՚է։ Բան և հինգ է ասկի yacht-clubի ընկերութիւններ կան որոնք 2000 զրօսանաւերու տորմիղ մ՚ունին, թէ՛ մեծ թէ՛ փոքր, բայց պերճանքի և վայելչութեան կողմանէ դիրար զերազանցելու կ՚մրցին։ Եւ մի՛ կարծէք թէ այս զրօսանաւերը փոքրիկ բաներ են և նաւահանգստին մէջ կամ շուրջը յածելու յարմար, ասոնցմէ շատերը եր-

կար ուղևորութեանց համար չինուած են, կան ալ որ թղթատար չոգենաւերու չափ մեծ են։ Այս տորմիլին վրայ պզտիկ գաղափար մը ունենալու համար կ'բաւէ գիտնալ թէ տարեկան 100 միլիոն ֆրանք ծախք կ'երթայ։

Աժեն բանի մէջ այս ատիճան չռայլութենէ կ'հասկցուի թէ Նիւ – Եօրք խելքէ դուրս հարուստ քաղաք մը պէտք է ըլլայ։ Հոս տեղն է քանի մը թուանշաններ չարել որոնք մեր խեղճ արևելցւոցս բերնին ջուրերը պիտի վազցնեն։

Նիւ – Եօրք 1,800,000 բնակիչ ունի, և ատոնց հարստութիւնը վեց միլիար 762 միլիոն տոլարի կը հասնի, այսինքն՝ եղեսաւն ֆլէրէ 810 ֆլէրէ ֆրանքի։ Զմռսնանք ըսել նաև որ Նիւ – Եօրքի քաղաքապետութեան կալուածները, հողերը, դրամագլուխը աս հաշուին մէջ չեն։ Այս գումարը Նիւ – Եօրքի բնակչաց բուն հարստութիւնն է։ Եթէ Նիւ – Եօրքի բոլոր բնակչայ մէջ բաժնենք մարդ գլուխ կիները և տղաքն ալ հաշուելով՝ քսանական հազար ֆրանք կ'իյնայ։

Դիւրին է մակաբերել թէ անանկ քաղաքի մը մէջ որ և է մկկը եթէ պարզ միլիոն մ'ունենայ բանի տեղ չեն դներ, որչա՞փ ծանր պէտք են ըլլալ աչխատութեան վարձքերը։ Այս մասին պզտիկ գաղափար մը տալու համար ըսենք թէ միայն անոնք որոնց պաշտօնն է միայն և միայն գործերը կնճռոտելուս, այսինքն փաստաբանները՝ տարին 100,000,000 ֆրանք կ'չահին։ Բժիչկները՝ որոնցմէ չատերը իրենց ազիատութեամբը կ'փային, 60 միլիոն ֆրանք կ'դրպանեն, իսկ ատամնաբոյժները ութ միլիոն, մնացած արհեստաւորներն ալ ըստ այնմ։

Այս գումարները և եանքիներու իրենց անձնական հաճոյից համար ըրած ծախքերը հարկաւ սոսկալի մտածմունքներ կրնան թելադրել անոնց որ իրենց գրպանին մէջ չէնչ մը չունին։ Եւ անոնց մին ալ ինչպէս ամեն տեղ Նիւ – Եօրք աւելի չատ է, 60,000 ընտանիք կան որոնք հասարակութեան նպաստովը կ'ապրին։

Ահա երկիր մը ուր եթէ ընկերային խնդիրը ծագի կծու կերով մը պիտի առնու։

Ի՞նչ նախանձ, ի՞նչ քէն, ի՞նչ ատելութիւն չպիտի գրգռէ փոլթէրս այս յորգ անթևը։ Բաց ասոր հակառակ պէտք է մտածել թէ ի՞նչ մեծ առևտրական և արուեստական ոյժ և կորով պէտք է ունենալ ժողովուրդ մը՝ որ ատանկ վիթխարի դրամագլխի ակր է, և ինչե՞ր չէ կարող ընել եթէ երբէք որ մը խելքին փչէ իր կամքը կատարել տալ եւրոպական հին աղելբէն մէկուն, կամ ի՞նչ չկրնար ընել եթէ այս աղելբէն մին՝ Նոր Աչխարհի գործերուն խառնուիլ ուզէ։

Թ–ե՛։ ԳԷՈՐԳ ԱՕՐԱՍԱՆՑԱՆ

ՅՕՒՅՑԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՑ

Ս. ՍԻՈՆ ԵՒ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՆԿԵՂԵՑԵՑԱՑ ՄԱՂՆԻՍԱՑԻ

Շարունակութիւն

ԹԻՒ 2

ՕՍԿԵՓՈՐԻԿ

1665 ԷՆ ԱՌԱՋ

ԿԱՋՄ հին արևելեան, տախտակեայ կաշէպատ, քայքայուելու վրայ էր։ Նիւթ թուղթ, ողորկեալ փայլուն։ ԹՈՒՂԹԻ 234 կամ 468 էջք։ Թուանշաններն էջերու վրայ դրուած են վերջէն օտար գրչով։ Մեծութիւն 19×13.5 հարիւրորդ մէթր։ Գիր բոլոր գիր, տգեղ դրչութիւն։ ԳՐՈՒԹԻՒՆ միապիսակ 13.5×9 հրդմ. այս չափն տեղ տեղ կը տարբերի։ ՏՈՂԻ 17—18։ ՀԱՆԳԱՄԱՆՔ մաքուր պահուած չէ, տեղ տեղ ալ մաշած թղթեր կան։ ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴԻՔ կան տեղ տեղ, ոչ այնչափ ճաշակաւոր։ ՎԻՐՆԱԳԻՐՔ կարմիր են, և հատուածներու գլխագիրք ԶԱՐԴԱԳԻՐՔ են կարմիր։ ՅԻՇԱՏԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ բազմաթիւ (տե՛ս էջը), Գլխաւոր յիշատակարանը էջ 467։ ԺԱՄԱՆԱԿ ըստ չափեան անծանօթ, բայց 1665 թուականէն չատ առաջ եղած գրչութիւն մըն է։ ԳՐԻՉ Աբրահամ երէց։ ՏԵՂի գրչութեան, ի գեւաղն Աչոտին ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին։ ՏԷՐ գըրիչն, յետոյ Առաքել անն և այլք։ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ Մատենիս սկիզբն թերթ մը կայ, որուն վրայ օտար գրիչ մը նոտր գրած յիշատակարան մը գրած է թէև, սակայն մեծաւ մասամբ եղծուած ըլլալուն, մեզ ալ ընդօրինակել հարկ չը տեսայ։

Մատենիս է՝ ՕՍԿԵՓՈՐԻԿ։

1։ էջ 1։ (անվերնագիր)։ Այսաւր բարգաւաճեալ պայծառացեալ Սիոն Մայր Եկեղեցիս Այսաւր հրճուեալ բերկրալից։ . . .

2։ էջ 28։ (անվերնագիր)։ Խորհեցաւ աւետեան Սրբուհի Աստուածին Մարիամ երթալ ի լեառն ձիթենեաց կալ յաղաւթս։ Եւ դնալն իւրում ընդրեաց ՅԱՅ։ աղաւթիւք։ Զի առաքեսցէ Տէր զհրեշտակս իւր։

3։ էջ 64։ Հարցմունք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ պատմութիւն Հրեշտակի վասն հոգւոց մարդկան Ութերորդ։ Սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր հայոց եկեր։

4· Կ՚ երթայ Տն· մերոյ Յի· Ք՚ի· որ առաքեցաւ յերկինս յերկիր· ի տանէր Սբ· Առաքելոյն Պետրոսի և Պաւղոսի Սկիզբն նս Պատմ Հռովմայեցոց երկրիս։

5· Կ՚ երանելոյն Եփրեմի ասացեալ վասն պահելոյ Ա՚բրահկին Սկիզբն· Պատուեցէք զտէր Ա՚բրահկին։

6· Կ՚ 144· Պատմութիւն կամաւոր աղքատին սրբոյն Ա՚իքսիանին Սկիզբն· Այր մի էր ի Կոստանդինուպաւլիս։

7· Կ՚ 174· Առաքելք սրբոյն արբա Եփրեմի ասացեալ մաղթանք· Սկիզբն· Տէր Աստ· զատրութեանց ազաչեմ զքեզ։

8· Կ՚ 202 Վասն արա(աս)ուաց և խաստովանութեան և ապաշխարութեան· Սկիզբն· Արդ չնորհ արտասուաց նշանակ է սիրելոյ Պս։

9· Կ՚ 224· Թէոփիլոսի ասացեալ յաղագս զղջման են արտասուաց· Սկիզբն· Արդ պարտ է ամենայն մարդոյ, զայս ածել զմտաւ։

10· Կ՚ 230· Վկայաբանութիւն սրբոյն Մարիանէ կուսին, որ վկայեաց վասն անուան Ք՚ի· յայանիք (= յՆԱթիոք) քաղաքի· Սկիզբն· Յետ յարութեան Տն· մերոյ և փրկչին։

11· Կ՚ 269· Ուղիղ դատաստանութիւն հաստատոյ, զոր մեզ պարտս Վարդան գրեցի, յԱստ· ային գրոց Սկիզբն· Զատ· ութիւն անճառելի և անհասանելի։

12· Կ՚ 308· Սուրբ հարցն ուղափառաց հաստատեալ ի պատճառս նաւակատեաց խորհրդոյն յաղագս անհասին· Սկիզբն· Թէ հերձուածող կամ այլ այլ ազգ քրիստոնեա հարցանէ զիս թէ ընդէր զրօղոր ազուհացքն պահէք սկիզբ։

13· Կ՚ 325· Վասն չի բանալոսելոյ, զքահանայս, և զվարդապետս և զեղբայրս· Սկիզբն· Մեծերք ազգ և տղամարդք տրամութեան դնեցեալ կանոն ի վերայ իմ։

14· Կ՚ 355· Առքիւ (հի-անդաց) Ուրբաթ աւր կարող կամ չորեքշաբթի տանի զհիւանդն ի դուռն եկեղեցւոյն, եւ ասէն ... Սաղմոսն, մինչև ի գործքն և ապա ասէն ը· մ· տէր ողորմեա և զաւրհնա Սկիզբն· Կարդամք առ քեզ տէր Աստ· մեր։

(Այս մասին մէջ կան նաև երգեր· մաղթանք Նահեկացւոյ, և աւետարանք բժշկութեան)։

15· Կ՚ 417· Կանոն աւանդհարի, Առաքելք սրբոյն Պետրոսի առաքելոյ· Սկիզբն· Ես Պետրոս հալածիչ եկեղեցւոյ զաւուրս բազումս։

16· Կ՚ 425· Գիր խոցի և դանի ամենայն ցեղի գինէ որ եւ լանեն ի մարդիկ· Սկիզբն· Յանուն Աստ· Բա· Աստ· որ վասն մեր մարդ եղեր։

17· Կ՚ 427· (Հետևեալն կայ) (ա) (ս) (ք) (է) (վ) (ֆ) (ր) թէ դան է, թէ խոց է, թէ ուռէց է, թէ այտուց է, թէ խուժրայ է, թէ աւմիկ է, թէ գինէ և իցէ, զայս է գիրս գրէ ի վերա

և զամէն գրի մեկնութիւն գրէն ասա, և զառաջիկայ ազատքդ ի վերա կարգայ բժիշկի Ա։

Խէն, Այծինքն, խաչեալն Ա. ի խաչին հեզուսաւ վասն առաքինութեան։

Սէն, Սակ մարգ ոչ այլ Ա. և մարգ ճշմարիտ։

Փէն, Փէրոպէրէից վերապիտոյն որ նստի ի վերա նորա։

Յէն, Կա եմ Ա. և չիք այլ աք բայց յինէն։

Վէն, Վեհապոյն Ա. աստուածոյ։

Քիրն, Քրիստէ և կեցուցիչ աւետեան աշխարհի։

Թէն, Թագաւորակ և յաւիժարար կենդանի եմ յաւիտեան։

Ծառ մի կայր մէջ երկրի որ ոչ ճիւղ ունէր և ոչ տերև և ոչ արմատ, Արծիւ մի նստէր ի վերա նորա որ ոչ գլուխ ունէր, և ոչ ոտք և ոչ թև։ Հարցին զնա և ասեն . . . ։

18. էջ 437. Աղօթք սրբոյ Փիլիպպոսի հայրապետին, Սկիզբն. Ցա. Քա. որպէս Այ։

19. էջ 445 Դիր չարչ ակին։ Սկիզբն. Գայր գեան Որդեանն. և բերեր ծառ մի գեղեցիկ և պատուական . . . ։

20. էջ 446. Զգաւանութիւն հաւատոյ։ Հաւատամքդ ի մի Ա. 21 էջ 448. Խոստովանութիւնք կրաւնաւորաց։ Մեզայ Աստուածածնէ։ 22. էջ 457. Հաւատով խոստովանիմ աղօթք։

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

1. էջ. 1. (Նոյր գիր նորագիտն գրէն). «. . . Իզմիր քաղաքի առաջնորդ Բարեկ վարդապետս ակի քաղաքն Մանիսիայ որ Ի. քահանա ձեռնադրեցի ի Սր Լուսաւորչէ եկեղեցոյն սպասաւոր զոր և տէր Ա. անուանեն կենօք պահեսցէ ամէն, որ է ըզպէք Պաղտա և գիր Բարեկն Ա. վայելուչն ասացէ ամէն։»

2. էջ 27. (Մաթենէ գրէն) «Քա. Ա. բարեխաւսութեամբ ամենայաղթ և Ա. ընկալ Սր. Նշանի քո ոգորմեալ սատարդի գրոցս։» (Օրաբ գրէտ) «Աւետելին իր որդւոյն Յաղուպին, Պաբոմին, Հերեքին, յորեան մերձաւորացն, հաւատար ննջեցելոյն։»

3. էջ 63. (Մաթենէ գրէն). «Քա. Ա. մեր ոգորմեա սատարդի գրոցս։» (Օրաբ գրէտ) «Աւետելին, կնոջն Գահաբին, որդւոյն Յաղուպին Պաբոմին, Հերքին, հաւատար ննջեցելոյն յաւիտեան ամէն, Հայր մեր . . . ։»

4. էջ 70. 106, 125, 201, 230 ին եղած յիշատակարանք գրեթէ նման են վերոգրեալ թիւ 2, 3 յիշատակարաններուն։

5. էջ 268 (Մաթենէ գրէն) «Քա. Ա. ոգորմեայ սատարդի գրոց։» (Օրաբ գրէտ) Պալէշանին, Պաղտային, Աւետելին, կենակից-ներուն Գահաբին, Մարգին, յորդւոցն Յապետին, Մխիթարին, Ի. Հէ-բէթ. մեզայ գրչին Սէրգիս Քահանային. մանակից եղաւ Սէրգեան Քահանային, իւր գրոցս, Ա. գինքն քօղ (=քաւէ)։»

6· ԷՀ 308 ՅՅՅ, երկու յիշատակարանք ևս կան հիշդ վերնոյն պէտ։

7· ԷՀ 467· (Գլխաւոր յիշատակարան), «Արարք համագոյ և միաոնակամ տեառ աներեւելի Սր. Երրորդութեանն և միաւորեալ Ա.Ծ.ութեանն Հայր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեան։ Ասառնաւոր յանկ ելեալ աւարտեցաւ Ոսկիփորիկս ի գիւղն Ա-ղուտին ընդ հովանեաւ Սր· Ա.Ծ.ածնին և Սր. Յակոբին, ձեռամբ նուաստ և ներգևեալ ոգոյ սուտ անուն Աբբահամ Իլէցոյ, և ծ-նողացս Տէր Ս-ըբ-ին և իմ հոգևոր քուրըշըն Ա.ղ-ային, և իմ հոգևոր որդոյն Մաղխիէն որ չատ աչ (խ) ատեցաւ ի հաց կերուան, Ա.Ծ. ողորմի իր մատր մեծ մեռելոտաց հոգոյն։»

8· (Մատենիս վերջը եղած երկու դատարկ թղթերուն վրայ այլ և այլ անպէտ և անրնթեռնլի գրերէն ի զատ հետևեալք ևս կան նոտր գրով գրուած)· «Տէր Յակոբոս Տէր Պետրոս քահանայ օրհնեցաք զդպրատոցի տուողնորդ Աբբահամ Վարդապետի թվին ՌՄԺՈ.Ա (=1762) Դեկտեմբերի Ը։»

«Յիշատակ է Ոսկիփորիկս Տէր Աննիբին (=Անանիային) և իւր ծնողացոյ ամէն, գրեցս յիշատակըս ՌՃՀԴ (=1665) Մարդ ամոյ ԻՆ ըն աւրըն ուրբաթ ժ· ժամն, |||| · · · · |||| · · · · |· ||| · · · |· ||| · · · · |· ||| · · · |· · փոքր Աստուծոյ ամէն» (Այն ծանկապիրն կը լուծենք «Տէր Անանիա»)։

Ծանօթութիւն. — Զիւռնիոյ վիճակին կը պատկանի Մաղնիսան, որ Զիւռնիայէն երկուքուկէս ժամ հեռաւորութիւն ունի երկաթուղիով։ Մաղնիսայի մէջ Հայերն երկու թաղի բաժնուած են, վերի ըստ և վերին ըստ վարի թաղի Հայոց բնակչաց թիւն է 480–500 տուն, ունի Եկեղեցի մը Ս. Սիօն անուամբ, պայծառ և փայելչաչէն, գնդակաւոն մը որ չինուած է 1874 ին ծախիք Պատարագ տան Փափազեանի, ունին նաև երկու վարժարան նորաչէն, մին տղայոց և միւսն աղջկանց համար ուր կը յաճախեն երկու տեղ 580–400 աշակերտք։ Վարժարանին մէջ կայ փոքրիկ թանգարան մը, որուն մէջ կը գտնուին գանազան դրեանք և նաև մեր ցուցակագրած Ձեռագիր մատեաններն։ Վերի թաղի Հայոց բնակչաց թիւն է 120–150 տուն, թաղն չինուած է քաղաքին ամէնէն վերի մասին վրայ ձորի մը մէջ, եքսանչելի դիրքով և տեսարանով, օդն զովասուն, ջուրն առատ; թաղին վրան և երկու կողմերը ձորին մէջ զմայլելի վայրեր ու տեղեր կան, և այլն։ Եկեղեցին չինուած է յառնուն Արդին Գրիգորի Լուսաւորչի 1877 ին, ջանիւք և աշխատութեամբ Զիւռնիացի Տ. Պետրոս Ծ. վարդապետի Ներկայարտեան, ձեռնասուն աշակերտ հանգուցեալ Աւետն. Տ. Պօղոս Արքեպիսկոպոս Թագվազեանի, Աւագնորդին Զիւռնիոյ և երբեմն Պատրիարք Կ. Պոլսոյ։ Թագիս հին Եկեղեցին, որ նորոյն հանդիսացին կողմն է, այժմ կը ծառայէ վարժարանի տեղ, ուր կը յաճախեն 120ի չափ աշակերտք երկու տեղէ։

Տ. Վ. Պ.

ԱՌՏՆԻՆ ԳՈՐԾԵՐ

— Նոր Տեսուչ — Ամառանոցներ — Ազգ. Հիւանդանոց — Սչափահներ

Խմբագիրը. — Տեղւոյս Պատ. Ուսումն. Խորհուրդը կ'պիջանի վերջապէս վարչութեան կողմէ առացած ծանուցագրին վրայ նախորդ Տեսուչէն հրաժեշտ տալ և նոր մ'ընտրել, այս է՝ Պ. Մկրտիչ Սարըեանն։ Արդէն ազգային կրթութեան ասպարէզին մէջ ծանօթ անձ մ'է նա, վասն զի բաւական ժամանակ Միաց-Ընկերութեանց դաւառային դպրոցներու տնօրէնութիւնը վարած է և իրրև հմուտ, դործունեի ու փորձառու՝ հոչակուած է ժամանակին օրագիրներու մէջ։ Հիմակ կ'մտնէ Պ. Սարըեան նոր ու տարբեր մէջ ավայր մ'որ ունի տարբեր կրթական պահանջումներ։ Յուսալի է, որ պիտի ջանայ մեր վարժարաններու արդի տարտամ վիճակը լաւ մը քննել և ապա՝ կարեւոր բարեփոխութիւները մուծանել և նպատակն փորձերով ցոյց տալ իր կարողութիւնը։

— Այս վերջի ամիսներս՝ քաղքիս մէջ ևս նշանաւոր ամառանոցութիւն սովորականէն աւելի չատ եղան։ Բարեբնչան եթևոյթ մ'է այս։ Ընդհանրապէս մեր երիտասարդները քիչ քիչ կ'հասկնան կարծես, որ ոչ միայն առողջապահական այլ և տնտեսարարական պիտոյք մ'է ամառանոցութիւնն։ Այնպէս կ'թուի որ պարագաններն ու երեւմնակի Ա. Մաշտոց առաջ չորդ որներն այս մասին քիչ չատ ներդործութիւն ունեցած են մեր ամուրի դասակարգին վրայ։ Ուրիշ հեռաւոր դաւառային քաղաքներու մէջ՝ ինչպէս Կարին, Երիզա, Վան, Ուրֆա մի և նոյն ամառանոցին չարժառիթը կ'տեսնուի, չարժառիթ՝ որ օրինաւոր կենակցութեան հետ պիտի բերէ անչուշտ և աշխատութեան նոր զրդիռ մը։ Երանի թէ մեր մէջ ուրիշ չատեր ալ, որ տակաւին կ'թևթևին ամառանոցական չրջանին մէջ մտնել՝ նիւթական անհիմն նըկատումներով, կամ իրենց արդի անճահ կեանքէն իսպառ հրաժեշտ տալու դժկամակութեամբ, արիւրար խորտակէին այն կապերն՝ որ ամեն տեսակէտով կորստարեր ու վնասակար են, և մի միւն կապվէին, որով սրտի ու մտքի անդորրութիւն և դործունէութեան նպատակ հրապոյրներ պիտի գտնէին։

— Խոստանան հաւատամ՝ մի քանի տեղեկութիւններ պիտի

տամ մեր Աղգ. հիւանդանոցի վիճակին վրայ, վիճակ՝ որ անցեալներն բաւական ևս դոյներով նկարուած էր Բիւզանդիոնի մի թղթակցին կողմէ։

Մօտէն ստացած տեղեկութեանց նայելով՝ իրաւ, մեր հիւանդանոցը չդնաւ իր այն պայմաններուն մէջ՝ ուր պարտ է գտնուիլ ճոխ ու բարեկարգ հիւանդանոց մը։ Անի՝ հոգաբարձութիւն, անի՝ ինամակալութիւն, անի՝ նշանաւոր ու ճարտար վիրաբոյժ մը, բժիշկ մը, ակնարոյժ մը, եւ։ Սակայն արի տես որ առողջապահութեան, հիւանդապահութեան, հսկողութեան և մաքուրարութեան կողմէ անպակաս են թերութիւններ։ Եւ ո՞վ է, բուն մեղաւորը։ — Իսկոյն դրամական անճոռնի վիճակ մը։ Բնաւ համեմատութիւն չկայ պատսպարելոց և ծախուց մէջ։ Հիւանդանոցը մեծ, պատսպարեալները բազմաթիւ, իսկ հասոյթներն անբաւական են։ Առարկել թէ ինչո՞ւ համար հոգ չտարուիր զայն այնպէս մատակարարելու որ մուտքն ելքին հետ հաւասարակշռի, պահանջել է հիւանդները մեծ մասամբ արտաքսել, փողոցը նետել։ Իրօք՝ մի քանի տարի առաջ՝ որոշում մը տրուեցաւ հիւանդներուն թիւը սահմանելու, որպէս զի աւելի լաւ խնամուին, սակայն այդ անդործադրելի մնաց, երբ տեսնուեցաւ փորձով որ զայն դործադրել անկարելի է, քանի որ հիւանդանոց դիւրը ցերեկ դիմող խեղճ ախտաւորներ անոր դուռը գոց դտնելով սկսան փողոցը պառկիլ և աղերսագին պաղատանք որ պատսպարուին ու խնամուին։ Կարելի՞ էր մերժել և անաարբեր մնալ։ Անշուշտ անգթութիւն պիտի լինէր այդ։

Եւ մեր Հիւանդանոցը միայն հիւանդներու պատսպարանը չէ, այլ և աղքատանոց, անկելանոց և յիմարանոց է, ուր ապիկարներ, ծերեր, յիմարներ՝ թէ այր և թէ կին, որոց թիւն 50ի կ'հասնի, անդադար կ'յաճախեն ու կ'խնամուին, և հեռաւոյն ծախուց կ'կարօտին, և այդ ծախքերը չեն բաւեր։

— Ի՞նչ է այս ցաւալի կացութեան դարմանը, հարցուցի անցեալ օր Հիւանդանոցի բժշկին։ — Դարմա՞նը, է՛հ, չատ դիւրին է, պատասխանեց, տաճկի մը համար դոցել բոլորովին Հիւանդանոցը քան թէ այսպէս մատակարարել։ Մինչ դիտէ՞ք, յարեց նա, որ տարին մէջին հաշուով 650 էն մինչև 850 ՀԻՒԱՆԴ ՄԻԱՅՆ կ'խնամուին՝ չրջարերարար մանելով ու ելնելով մեր Հիւանդանոցին մէջ։ Այժմեան հասոյթին հետ պահիկը պէտք է որ կանոնաւորապէս մատակարարուի այդ

Հիւանդանոցը Եւրոպա՝ հիւանդանոցներու դրութիւնն է ընդհանրապէս անկողնի վրայ հաշուել ծախքը, որ է 40 էն մինչեւ 70 ոսկի։ Ան նուազն 50 անկողին կայ միշտ մնայուն հիւանդներով այդ Ազգ։ Հատատաւթեան մէջ իրարց ժողով ապիկարներն, ծերերն, թշուառներն ու չիմարներն որ ոսկեսէր չեն, և տարբեր խնամոց կարօտ Լա՛ւ, բոլոր Հիւանդանոցի պատսպարելոց համար այլ և այլ պէրիներէ, այս է՝ Ազգ։ արկղն, բանկալն, տարեվերջ ևս տարեկան, 800 ոսկի եկամուտ կ'ըսէին որ հազիւ կ'բաւէ միայն հիւանդներու համար, եթէ Եւրոպայի նուազագոյն ծախքով՝ անկողնի գլխատարեկան 40 ոսկւով՝ մատակարարուած հիւանդանոցներն իրենց օրինակ առնուին։

Դարձեալ պարտ է դոհ լինիլ որ այսչափով կ'գառնայ հիւանդանոցը, չարունակեց բժիշկն, և կարծուածին չափ յոռի չէ վիճակը, քանի որ ուտեստի ու հանդերձեղէնի մասին կատրեին կ'կատարուի, մեզէն կերակուր ամէն օր անպակաս է, նոյնպէս թան, բանջարեղէն, պտուղ, պանիր, խաղող, իսկ ծանր հիւանդներուն համար յատուկ խնամք ու կերակուր կը տրուի։ Նոյնպէս ճերմակեղէն չարաթը մի անգամ կ'փոխուի և մաքրութիւնը համեմատաբար նուազ է։ Պէտք է նաև ընել որ այլ և այլ կարօտութեանց մէջ՝ Հիւանդանոցի սենեակ հրաժեշտ պիտոյից կարգն են կարօտաց և կանանց բաժնին գլխովին նորոգութիւնն և չիմարներու այլուր տեղափոխութիւնը։ Հինօրեայ քաքայուած մահիճներ, պատուան, աղտեղի նստարաններ ևս, նոյնպէս կ'պատճառեն, նորոգ չկայ, որ դրամ չկայ կ'ըսեն, Բժշկին պարտաւորութեան սահմանէն դուրս է միջամտել այնպիսի բաներու որ ներքին մատակարարութեան ու խնամակալութեան կ'պատկանին։ Ինք դիտողութիւն կ'ընէ, կ'պատուիրէ և դարձագրութիւնն որու որ անկ է կ'մղուի։ Փանիցս միտքեր եղան նաև՝ բժշկութեան պատուերին համեմատ, հեռացնել չիմարներն, որ քանէ աւելի են, Հիւանդանոցէն և յատուկ պատմաններով Ս. Փրկչի հիւանդանոցը փոխադրել, քանի որ անոնց բնակութեան սահմանուած դուռերն ինչպէս և հոգածութեան եղանակը բոլորովին անյարմար են, քանի որ մասնաւոր կանոններ կան խելագարութեան մասին խնամատարութեան համար։ Բայց այդ միտքերն առարկուն մնացին չգիտեմ ինչու, թողուվ խելագարներն ալ մի և նոյն ողբալի վիճակին մէջ, —

Եւ խօսակիցս աւարտեց իր խօսքը յայտնելով թէ՝ անոնք որ մեծ մեծ կ'ջարդեն ու կ'կարծեն թէ կարելի է Հիւանդանոցը լուազոյն վիճակի վերածել, իր արդի դրամական միջոցներով, թող նեկային և ստանձնեն անոր մատակարարութիւնն։ Հայ հասարակութիւնն անոնց չնորհապարտ պիտի մնայ անշուշտ եթէ կատարեն ինչ որ կ'պահանջենն։

Այս ամենէ սա կ'հետևի որ՝ թէև Հիւանդանոցը նախանձելի վիճակի մէջ չէ, թէև որքան որ գվայուր մեղադրանքը դրամի նուազութիւնն է, սակայն ադկից չհետևիր նաև որ անօրէն, հոգարարձու, խնամակալ հի կարող են արդարանալ և պատասխանատուկենէ ազատ մնալ եթէ դրամական անձկութիւնը պատրուակ բռնելով՝ իրենց պարտքը անթերի չկատարեն և անձանձիր հսկողութեան, մաքրութեան և կանոնաւորութեան պահանջումներն ի գործ չդնեն։

Աւելորդ չէ դիտել նաև որ Իզմիրի Ա.զգ. Հիւանդանոցն շատ է իզմիրցւոց համար, որոց թիւը հազիւ 9000 հոգի կը հասնի, և թէ բուսական կարևոր տեղ մը կ'բռնէ իր տարեկան ելմտացոյցին մէջ, հետևապէս բնիկ վերայնոց ողորմասիրութեան յայտարար կանդուն մի նշանն է այդ հիմնարկութիւն, որուն մէջ պատսպարեալ ազգայնոց % 80 գաւառացի պանդուխտներ են։

— Ինչպէս այլուր, նոյնպէս տեղւոյս մի սովորութիւնն է որ դպակից ազգական ու բարեկամ քիչ շատ տուզ ծպտիկ փունջեր կ'նուիրեն հանդուցեալի մը դադափին վրայ դրուելու համար, ի նշան իրենց վշտակցութեան։ Թէև այս սովորութիւնը գովելի՝ իբր կարեկից ղգացումներու յայտարար, սակայն այդ ծպտիկներն ու փունջերն որ մի քանի օր միայն կ'տևեն ու կ'թառամին, միմէ ուրիշ ձևով մը չե՞ն կրնար նոյն և աւելի օգտակար նպատակի մը ծառայել։ Ահա այս նպատակաւ անշուշտ Տիլսիզեան Ցակոբ կ'ջինտին 5 արծ. վճիտ դրկած է Հոգ. Որբանոցի, փոխան ծպտիկ-փունջի մը՝ յանուն հանդուցեալ Կարապետ կ'ջ. Անտոնեանի։

Կարծեմ հանդուցեալին յիշատակն այսպէս արդարին օրհնութեանց առարկայ կ'լինի, և յուսալի է որ ուրիշներ ալ՝ սըգալի պարադաներուն մէջ՝ Տիլսիզեան կ'ջինտիին այս ողորմասիրական օրինակին հետևին։

19 Փետրվար ՍԻՍԱԿ

ՅԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ Է

. . . խմբագրութիւն Ա. Մամլոյ,

Աճապնդեցէք վերնագրի տակ Պ. Միսակի Ա. Մամլոյ ուղղած յօդուածներուս ուշ ակնարկութիւններէն ամեն սրբազոսնական մարմին իր բաժինը կ'ունենայ * : Այս անգամ Բազմաքական ժողովի մէկ որոշումն է որ Պ. Միսակ հակասահմանադրական կը գտնէ. (Բազմաքական ժողովի այդ որոշումը կը վերաբերի մեր Ազգ. վարժարաններուս տեսչի Պ. Խաչիկ Դադազեանի հրաժարեցուցման) բայց Պ. Միսակ անշուշտ կ'անդիտէ որ Բազմաքական ժողովը այդ որոշման չէր կրնար առաջ հարկ եղած ձեւակերպութիւնները ըրած, ինչպէս նախ՝ որոշելով իր մէկ նստին մէջ՝ նշանակից երիս անդամներ՝ Պ. Սիմոնեան և Քէօլէեան որ երթան բանակցիլ Ուսումնական Խորհրդի Պատ. անդամներուս հետ. բանակցութիւնը ապարդիւն մնաց, յաջորդ նստին մէջ Բազմաքական ժողովը որոշեց հրաւիրել Ուսումնական Խորհրդի Պատ. անդամները խնամն մը ընելու, նոյնպէս անլսելի մնաց Բազմաքական ժողովի այս որոշումը։

Այլևս չէր կարելի ժամանակ կորսնցնել, արդէն հատարտութեան մէջ հետզհետէ գանգատները կ'աւելնային և կարգ մը երիտասարդներ հանրագրով մը Բազմաքական ժողովի կը ներկայանան և Պ. Տեսչին հրաժարումը կը խնդրեն. ուստի Բազմաքական ժողովը, անախորժ դէպքերու առիթ չտալու համար, իր վերջին նստին մէջ կ'որոշէ (ա՛չ թէ կը վճռէ) գրել և խնդրել (ա՛չ թէ ապտարել) Ուսումնական Խորհրդէն որ՝ ինքն ալ համաձայնիլ գտնուելով մի և նոյն որոշման, հրաժարեցնէ Պ. Տեսուչը * * :

Իզմիր, 17 Փետր. 1897

Բազ. ժողովի անդամներէն
ՄԻՔԱՐԴԻՏ ԴԱՒԹԵՐՈՒՆԱՆ

---

* Այդ դիտողութիւններն ևս իրաւացի են, հարկաւ իրենց օգուտը կ'ունենան։ Մ. Դ.

** Ըսենք՝ եթէ սահմանադրական ամեն ձեւակերպութիւնները կատարած է Պատ. Բազ. ժողովն, ինչո՞ւ համար Պատ. Ուսումնական Խորհուրդը բողոքած է, ինչպէս իմ կ'յայտարարէ, անոր այդ որոշման դէմ, անկարող եղաւ հասկնալու։

ԽՄԲ.

ՀԵՐՔՄՆԱԴԻՐ

. . . Խմբագիր

Ժամանակէ ի վեր Ա. Մ-եան գրելէ ամէն թիւին մէջ, Ա.ղդ. վարժարանաց և Ազատամտական խորհրդոյ դէմ դրուած յօդուածներ կը տեսնուին, որոնք մատամբ հնարեալ և մատամբ խեզամիւրեալ եղելութիւնները մէջ բերելով, հասարակաց կարծիքը շփոթելու և Ազատամտական խորհրդոյս առ ազգին մատուցած ծառայութիւնը նսեմացնելու կը ձգին։

Թէև մեզի լաւ ծանօթ է ձեր այս վարմունքին բուն շարժառիթը, և հետևաբար այն չնչին իրողութիւնները, որոնցմով խճողուած են ձեր յօդուածները, անձնականապէս մեր վրայ տպեցուելիքն չեն կրնար ունենալ, բայց քանի որ անոնք հասարակութեան առջև իրը ճշմարտութիւններ կը ներկայացուին, պարտ համարեցանք, գլխաւորներուն անճշտութիւնը երևան հանել։

Ճշմարիտ չէ, որ վարժարանաց բացման պահուն ոչինչ կազմ ու պատրաստ էր (ինչպես որ դուք կը կարծէք) այլ ընդհակառակը ամէն ինչ որ պէտք էր, պատրաստ էր. միայն մեկ կամ երկու դասագրքեր քանի մ'օր ուշացան Փոլոյ այն առևնուազն վիճակին պատճառաւ, և դասախօսութիւնները սկսան, երբ աշակերտաց թիւը դասարաններ կազմելու բաւական եղաւ։

Ճշմարիտ չէ, որ դասատուները ծրագիր պատրաստելու համար արիւն քրտինք թափեցին, ծրագիրը Ազատամտական խորհուրդը պատրաստեց. դասատուներէն պահանջուածը, իրենց աւանդելիք դասերու և գլխաւոր բաժանումներու ցանկն էր, որով կարելի պիտի ըլլար դատել թէ չէզանի վարձանին դասերը կրցած են հասնիլ այն կէտին ուր պէտք էին հասնիլ։

Ճշմարիտ չէ, որ դասատուներու մանաւանդ իսութիւնը նկատողութեան առնուած չէ դասերու բաժանման մասին, ընդհակառակը այս կէտը աւելի ուշադրութիւնը դրաւած է խորհրդոյս և ըստ այնմ բաժնուած են դասերը։

Ճշմարիտ չէ, որ դասատուները սորկութեան վիճակին ենթարկուած են. երբէք այդպիսի դանդատ մը չլսեցինք անոնցմէ։

Ճշմարիտ չէ, որ հիւանդութեան պատճառաւ բացակայ եղող դասատուներու տեղակալին վեցլուծած է. որո՞նց. — անունը տուէք եթէ կըրնաք։ Ինչպես նախ ճշմարտութեան հակառակ է ըսել թէ խորհուրդս դպրոցի դասատուին հրաժարականի սպառնալիքէն զարհուրած է, բոլորովին հակառակը անոր նամակին զննչ եղած է։

Ճշմարիտ չէ, թէ Ամերպեան վարժարանին մնացեալը հասարակաց առջև փակուած է, այլ միայն պահանջուած է որ վարժարանն այցելել փափաքող անձինք, տեսչին կամ կառավարչին գիտութեամբ այցելեն. և հոն բուռը ձեր երևակայութեան ծնունդ է միայն։

Ճշմարիտ չէ, թէ մեր վարժարանաց մէջ որ և է ձևի տակ լրտեսութիւնը գոյութիւն ունի և կամ մեր օրով երբէք ունեցած է։

Ճշմարիտ չէ, որ Ազատամտական խորհրդոյ մէջ անհամաձայնութիւն կայ. մեր արձանագրութիւնները կը ցցուհեն թէ միաձայնութեամբ որոշուած մեկ կամ երկու բնդիրք զատ, բոլոր վիճակը համաձայնութեամբ որոշուած են։

Ճշմարիտ չէ, որ Ազատամտական խորհուրդը վարժապետական խնդիրն հետ ամեն յարաբերութիւն խզած է, ընդհակառակը միշտ ցուրջ նկատողութեան առած է և կ'առնէ ազատչական մարմնոյ կողմն ներկայացուած դիտողութիւնները։

Նոյազ կարեւորութիւն ունեցող կէտերը կանցնինք բայց միանգամայն ձեզի կը յանձնանինք որ, ձեր թերթին մէջ, ապագային վարժարանաց մասին հրատարակուած և իբր ճշմարիտ իրողութիւններ ներկայացուած դէպքերէ մեծ ու փոքր առանց բացառութեան անճիշդ և չինծու են մանաւանդ նպատակի ծառայելու համար յարդարուած և ձեզի կազդարնինք որ պարտաւոր էք կամ զանազան ապացոյցներով հաստատելու և կամ յետս կոչելու, եթէ արդարասիրութեան և ազգասիրութեան դէմն նշմարէ մ'ունիք ձեր սրտին մէջ։

Տեսչի հրաժարականի դէպքը որ գոնէ և ձեր համախոհները մեծ աղմուկով կուզէք ներկայացնել սոսկ դրամական խնդիր մ'է, և դպրոցական գործերու հետ բնաւ առնչութիւն չունի։ Պ. Գազազեան իմանալով որ իր տեսչութեան պաշտօնին շարունակութիւնը պիտի կրնար անհանգիստ դէպքերու տեղի տալ ինքնին հրաժարած էր։ Յայտ է որ Պահպ. փաստաքական ժողովը, իր Գեր. Նախագահին միջոցաւ միջամտելու հակաառնանդրական փորձ մ'ըրաւ, նամակաւ մը խորհրդոյս ծանուցանելով Տեսչի պաշտօնակութեան մասին իր որոշումը, բայց թէ խորհուրդս ընդդէմ համակրած է թէ ոչ կրնաք դիւանատունն դիմել և դրուած պատասխանագրին իմանալ։

Խորհրդոյս անդամներէն միոյն, Պ. Մ. Մաթեւոսեանի պատճառաբանելով հրաժարագրին վրայ ալ բաւական կը ծանրանաք ձեր վերջին թուոյն մէջ, այդ մասին մեր գիտցածը այս է որ Պ. Մաթեւոսեան փետրվար 10 թուակիր նամակ մ'ուղղելով խորհրդոյս կ'ըսէ թէ ստիպուած է պնդել հրաժարականին վրայ զի կը տեսնէ թէ անյաջող դէպքերէն խղճի մտոք կատարել իրեն յանձնուած պաշտօնը։

Իսկ գալով վարժարաններու վիճակին վատթարութեամբ կրնանք ըսել թէ, նախորդ Տեսուչներու ժամանակէն աւելի կանոնաւոր և բարեկարգ է, ասոնց մէջ կրկին վարժարանաց ուսանողք շատ աւելի զարգացած են հին և նոր գաստատուներու խղճամիտ աշխատութեամբ և Ազատամտական խորհուրդը ինչ որ իր ձեռքէն կը գայ ըրաւ և պիտի ընէ այս վիճակին մէջ յառաջդիմութիւն պահելու համար։

Խնդրելով որ բարեհաճիք ներկայս հրատարակել ձեր պատուական հանդիսին մէջ,

Մնանք յարգանօք

Իզմիր 22 փետրվար 1897

Ի դիմաց Ազատամտական խորհրդոյ

Ատենապետ Լ. ՊԱԼԵՕԶԵԱՆ

Ատենադպիր Մ. ՍԻՄՈՆԵԱՆ

Այս նամակին, ինչպէս Արդոյ ընթերցողը դիտած է, Պատ. Ազատամտ. Խորհրդոյ Ատենապետեան (իր ա. հրատարակել՝ և իր խնդրոյն համեմատ՝ բ. ոչ հրատարակել նամակին պէս) անհաճոյքէն չէ դրած, այլ անոր Դիւանին կոչվէ յօրինուած է,

անգամ դ. պրոցեսական խնդրոյն պաշտօնական գոյն ու կերպ տալը դիտմամբ։

Միայն այս է զարմանալին՝ որ մեր Պատ. Նուսուն. Խորհրդ. ոչ Դիւանն ալ կ՚ուժամբէ իր խօսքն ուղղել Խմբագրութեան՝ վանքերու դպրոցներուն վիճակին վրայ կարգ մը դիտողութիւններ ընող՝ Սկռտչեն և Եռանէոսէն ուղղուած։

Շեղտակ ճամրան, թէև քիչ մ՚ուշ, գոնած կ՚երևի Պատ. Ուսումն. Խորհուրդը Խմբագրութենէս, որ առակաին իր կարծիքը չյայտնեց վէճի տակ եղած և կէս մը լուծուած խնդրոյն վրայ, բայց պիտի յայտնէ, ինչո՞ւ կ՚վնասէ անձնականութիւն և վարուելակերպ, երբ խնդիրը դպրոցական անկեղծութեան վրայ է, վիճակ՝ որ մինակ Պ. Սկռտչէ և Եռանէոսէ աչքին չէ զարկած. ինչո՞ւ նորէն կ՚զրգռէ այդ խնդիրը, քանի որ Պ. Տեսուչը՝ դպրոցական ամեն անարեկարգութեանե ու Հաստատագոյ դժգոհութեան զլխաւոր պատճառն, հրաժարեր տալով, եղած քննադատութեանց ճշմարտութեան արդեամբ վկայած է։

Խմբագրութիւնս՝ ըստ կանոնի՝ կարող էր Դիւանին այդ նամակին հրատարակութիւնը մերժել, բուն հասցէին ուղղուած չլինելուն, սակայն ներողամիտ ու վեհանձն ոգւով կ՚գիջանի զայն իր թերթին մէջ ընդունիլ, Պ. Սկռտչէն և Պ. Եռանէոսէ թողով պատասխանել այդ պատգամաւ նամակին աղաւաղութիւններուն և չիշո կոչած ընելու պահանջումներուն, մեր կողմէ առայժմ այս յորդորը բարեկամաբէն կարդալով Դիւանին, որ բարեհաճի, իբրև ատեանական հեղինակութիւն, իր ոճը քիչ մը ուղղել, իր բացատրած իմաստներուն յատուկ և յարմար բառեր գտնել և աւելի վայելուչ լեզու մը գործածել։

ՄԵՐ ՆՈՐԱՏԻ ԵԿԵՂԵՑՊԱՆՆԵՐԸ

Նորութիւն մ՚է այժմ մեր մէջ նորատիպ երիտասարդներու ապերջին պաշտօններու հրաւիրել, և ինչպէս բոլոր մեր նախնեաց յօդուածին մէջ, այս եղանակաւ քաջալերել և վարժեցնել ջանալ ապրին ծառայելու գաղափարին։

Մեր ատեանը համր տեղւոյս Աղդ. վարչութիւնը մեծ խոհեմութիւն ի գործ դրաւ. Սը. Սահմանագ եկեղեցւոյ Հոգաբարձութեան պաշտօնը չանձնելով մի քանի երիտասարդներու, որոնք ներ անունանակը դանոնք անմիջապես Պարոնոյք Մկրտիչ Պալատեանեան Մկրտիչ Գազրեանեան Անտոն Աղտոնեան և Գրիգոր Պալասանեան։ Այս երիտասարդներէն վա-

ճառականության ոսպարէզին մէջ իրենց պարկեշտութեամբ, խոհեմութեամբ և լրջմտութեամբը ծանօթ ամենուն, զոր պաշտօնը առանձնելէ ի վեր առաւել եւս անդիմադրելի կ'ախտանայ ըստ կարելւոյն օրզիւնաւոր բնաւորել գործ։

Մեք հիացմամբ տեսանք և գնահատեցինք անոնց տեսութիւնները, որ նշանակուած էին ճշդիւ կանոնաւորութեամբ եկեղեցւոյ և ազգիս բոլոր մարդամանաւոր թիւններէն, և կարծեմք թէ չեմք սխալիր երբ ըսենք, թէ այս առաջին անգամ է որ մեր եկեղեցւոյ հաշիւները այսօրինակ ճշդապահութեան, և մանրամասն հոգածութեան ենթարկուած լինին։ Փառք այս երիտասարդներուն։

Ազգ. վարչութիւն, ինչպես կ'իմանամք, մտագիր է այժմ Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնն ևս խնդրել մ'երիտասարդներու յանձնել։ ԵՒէ այս խորհուրդ իրականութիւն գտնէ, և մեր երիտասարդք հաւանին զոր պաշտօնն ստանձնել, հաւատամք եմք թէ իրենց պարտաւորութիւնն անթերի կատարելն իրենց մէկ փառասիրութիւնն պիտի լինի։

Զմիւռնիա 3 փետրվար 1897

* * *

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 25 Փետրվար 1897

Ռաբեկա. — Ժողովուրդն այս տեղ ամեն բան վարչութենէ կ'սպասէ, և վարչութիւնը արդէն չատ տաժանելի պաշտօններ ունի կատարելիք իր սահմանին մէջ, թող որ ամեն բան կազմակերպելու հարիւրին մէջ կ'գանուի, դրամական տագնապին ալ դարման բերելու հոգն ունի, դրամ՝ որ տակաւ չատ դժուարութիւններ կ'տապալէ երբ անտեսորէն և խոհեմութեամբ կը գործածուի։ Յուսալի է, արդարև՝ որ գտնուին անձեր, մինչև իսկ պաշտօնական անձեր, որ վերանայի վարչական ճգանց աջակցելու, անդիմօրէն կ'խանգարեն հաշիւներ, կ'խորհին դրամներ, կ'գործեն վեճ ու վանիներ թէ՛ թաղային, թէ՛ ընկերական և թէ՛ բարեգործական ձեռնարկներու մէջ, և նորանոր չփոթութիւններ բերելով կեդրոնին՝ անոր գործը կ'ծանրացնեն։ Այսպիսիներ պարզապէս ապրին թշնամիներն են, անխիղճ և անհրապատակներ՝ որ անոր թշուառութենէ օգտիլ կ'ջանան։ Բայց վարչութիւն մը չէ կարող ամեն բանի հասնիլ, չէ կարող՝ երբ իր ջանքին անդադար ազերաարիւնելու, բարեարելու գրան մը կ'տանի գաւառային, հանրային գործերու լրջմտին պարապիլ։ Անհատական, հասարակական նախաձեռնութիւնն ևս անհրաժեշտ է մի չատ տեղական պիտոյքներ հոգալու; մի չատ ազգեաներ գարմանելու, համառօտ՝ գործունէութեան նոր դաշներ բանալու։ Եւ այդ նախաձեռնութիւնը տակաւին պիտի տեսնուի, այդ նախաձեռնութիւնը չատ տեղ օտարներէ կ'սկսի և մինչև իսկ կ'պահանջուի, առանց նը կպատկերանք թէ կան մէջ անհատներ որ իրենց եռանդուն և

դրամական միջոցներով կարող են ազդուապէս սատարել վարչային մեքենային, ազգին արժանապատութիւնը պահելով և ձեռնարկութեան դովելի օրինակներ կանդնելով։ Ո՞րը պիտի երևան դան արդեօք այդ մեծանձն հոգիներն, ո՞րը պիտի ցոյց տան որ գիտեն տնտեսութեան պարտ կատարել և բարեպաշտութեան ու գործունէութեան ասպարէզին մէջ մրցիլ։

Ներկայ ժամ, բարեկամ, տարրեր մրցում մը կ'նշմարեմ միջավայրիս մէջ՝ որ բարենշան չէ։ Այս է պաշտօնավարութեան մրցում մը կամ լաւ ևս ըսեմ յեղեշրջում։ Պրօնատորը տաճարէն դուրս կ'ելնէ և աշխարհականը ներս կ'մտնէ, Մին միւսին դերը կատարելու ճամբուն մէջն է։ Ինչ միջոց եմէ ամուրի են մեր վարդապետներն ու եպիսկոպոսները և հետզհետէ կ'ջատնան։ դուռ չէ թէ անոնց կարգին այլ ասպարիզին նայի՝։ Եւ Ծրդ ինչո՞ւ կուզէ որ վերադարձները նուագին ու խորհուրդներն առատանան, քանի որ այժմ եկեղեցական դասը միայն բուն եկեղեցին կազմելու կ'նկրտի։ Եւ Բ—ընդհակառակն ինչո՞ւ այնչափ ցաւ որ եկեղեցական դասը անոտի կամ աննշան մաս մ'ունի, ըստ արդի Սահմանադրութեան, զանազան խորհուրդներու ու ժողովներու մէջ, և դիւանագործ ընտրելիներու համար ցանկեր պատրաստելու կոչուած է, քանի որ հետզհետէ՝ եմէ ոչ պաշտօնապէս, գործնականապէս կ'ընդարձակէ իր իրաւասութեան սահմանը՝ մէ ընկերային և մէ քաղաքական չրջանի մէջ։ Հակասութիւնն չօչափելի է։ մկ կողմէ դանգատներ՝ որ եկեղեցականդասն ընդհանրապէս անհոգ է, և ժողովրդեան կրօնական ու բարոյական պիտոյից անտարբեր, միւս կողմէ կ'պահանջուի որ ամեն բանի, մինչև իսկ աշխարհային գործերու մասնակցի։ Եմ կարճ խելքով՝ ճշմարիտ եկեղեցականն, ինչ կարող է որ լինի, այնքան գործ ունի իր տաճարին մէջ, իր հօտին մէջ, որ անկից դուրս նայելու ոչ ժամանակ և ոչ արտօնութիւն պարտ էր գտնել։ Իրօք եկեղեցականն իր տաճարին, իր եկեղեցւոյն, ժողովրդեան մէջ, մեծ է ու պաշտելի և չէ մէ աշխարհային չրջանի մէջ։ Նա ժողովրդեան օգտին կ'ծնի և պարտի ժողովրդեան հոգևոր պիտոյից ծառայել, փոխանակ եկեղեցին իր դասակարգին մէջ մարմնացնելու։

Պաշտօններու այս չրջումն օգտակար չէ, ըստ իս։ Արդեօք պիտի փորձուի օրինադրել այդ չրջումն, հիմակ որ վերաքննութեան հոտանքի մէջ ենք, և մեր եկեղեցւոյ սահմանադրականդրութիւնը պիտի վերածուի՞ աստուածապետական դրութեան, այս չդիտեմ։ այս միայն դիտեմ, որ մեր եկեղեցական իշխանութեան չէնքը հիմն ի վեր պիտի տապալի եմէ միակ նեցուկն որու վրայ չենած է խախտուի նոր օրէնսդրութեամբ մ'որու մի նմանն արդէն քանիցս բողոքոյ առարկայ եղած է։

ՇԱՀՆՈՒՐ

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

ՏՐԱՊԻԶՈՆՑԻ ԳԻՒՂԱՑԻՈՑ ԲԱՌԻՐ

Նօղը — Խմորկզէն է, զոր կ'չինեն այսպէս· իւղը, չաքարը, կ'դնեն խմորի մէջ և փուռի մէջ եփելով հասնելէ կերակուր կ'չինի ա– րոյ վերայ հաւկիթ կը քսեն։

Կումուլ — Դէզ։

Ծուռդուլ — Ոտայնիկի սալմանին վրայի անցուցած գաւազանն է որով սալմանը կը պըտրցնեն որ գաւազովն կատւը սալմա– նի վրայ կը փաթթուի։

Կարաւայ — Միակատւր երկկոնգուն քեսաթի փայտ մի է, գործուած կատւը երբ աւարտելու մօտենայ թելերու ծայրը նոյն փայտին կը կապեն որպէս զի հէնքը չտւաղ մնէ։

Ծիևսար — Երկկոտր փայտ մի է զոր գործուած կատւի վերայ կ'ամրացնեն որպէս զի հէնքը ազէկ մը լարէ, որուն ձաւազցիք մի թի կասեն։

Միքար — Տես ասոր։

Լաստառայ — Չինկ հինելու քառակուսի (չէրչիվէի) նման գործիք մ'է, որոյ վերայ (փքի– ները) ամրացած են որոնց վերայ կատւի հէնք կ'հինեն։

Կարիճ — Հինքի գլանակ որ է տակ· (մաքարայ)։

Իլիկ — Տակ· (երչ) որով մետաքս կ'ոլորեն։

Ձաղ — Գուլպայ գործելու անձակ ասեղներ, թէ փայտէ և թէ երկաթէ կ'լինին։

Օռօք — Հատ տախտակի վերայ անկուռած մի կանգուն ճաղ մի է որոյ ծայրի վերայ գաւազնայ նման չարժուն փայտի ան– ցուցած է, կանեփ կամ բուրդ կ'փաթ– թեն անոր վրայ կաշիով կ'պատեն զոր վերայի բուրդը չմափի և այն բուրդը

	կ՚ակոսին ձեռքով բարակ բարակ ղուրս քաշել և մանել, յիշեալ օձաքը կ՚ակոսի դառնալ և վրայեն ղուրս տալ
Կուխար	Փայտէ ակիչ մի է որով առաստաղէն բան կ՚կախեն։
Կռօչ	Երկաննգուն ճոզ մի է կեռ ակիչատոր որով կաղնի ծառերու բարձր ճիւղերը վար կ՚քաշեն։
Կըվրնի	Ձամ ծառ։
Գխտոր	Տառ. (մազը)։
Պձղի	Տառ. (քզըլտղամ)։
Մժրի	Տառ. (սիրկէն ալաճի) որոյ պաղուն կ՚ըսուի, կնցխաուլ։
Մօնի	Տառ. (ոզրիչ)։
Մաշմաւր	Շաքանակ։
Դեր	Տերև։
Լխխտղը	Երկմիլ զի բաժնուած բահի նման երկաթի մէ որուն Տառ. (պէլ) կ՚ըսեն, զոր գիւղացիք կ՚պօրծածեն երկիր փորելու։
Թխլրի	Տերևը իւր ճիւղէն պոկելուն կ՚ըսուի, իսկ ձավազոյիք մէրտել կ՚ըսեն։
Պէջոռ	Ծառերու ճիւղերը կարելու համար կանխաւար սուր և կոր երկաթ մի է։
Պօչօլ	Մէկէն մինչև չորս տարեկան ուղուն կ՚ըսուի։
Պուլիկ	Մէկէն մի՛ չի՛ չորս տարեկան աղջկան կ՚ըսուի։
Շող	Մորմենիի ծառ։
Տիրմիս	Սունկ Տառ. (մանթար)։
Կտրոր	Տառ. (աէրչնակը) չորս սիւնէն մինչև ամբը սիւներու վերայ կառուցուած տուն մի է որ արմատներ պահելու և ամառը մարդ պատհելու կը ծառայէ, որոյ յատակը ճիւղերով հիւսուած է, որպես պի տունը օդ առնէ։
Դաչ	Նորածին կովու երկու օրուան կաթը կեփելեն որ կը թաձրանայ իբր սպունգ

և պաղեցնելով վատեն, իսկ Մալաթիացիք խէր կ'անուանէն։

Ֆարասիֆ Կուէ հինուած տաշտ մի է կամ սանդ, ըսածիս բարդ անունն է, այսինքն քարէ սանդ։

Գուշ Փայտէ պնակ։

Կղլնպուր Դիւզացւոց սանդ մէջն է վատարանը, սանդ առատապի մէջտեղէն դերանի վրայէն կախուած է չղթայ մը ճիշտ վատարանի վերայ ուրկէ կախ կընեն կանթաւոր կամ օղաւոր սանդը որպէս զի ներքև վառուած կրակով կերակուրը եփի։

Ճուկ Վերոյիշեալ փոքրիկ օղաւոր սանդի անունն է։

Ծուփիլ Կիները իրենց գոգնոցի վերայ երկու մատ լայնութեամբ գօտի մը կը կապեն որուն կ'ըսեն ծուփը։

Ծխիլ Տան առատապի դերաններուն կ'ըսեն, որովհետև տան մէջ ծխոները վառուած ժամանակ այդ դերանները կը ծխոտէ։

Ղաշաք Ընկուզի կանանչ կեղև։

Խմբուղ Կանանչ խոտ մի է որոյ երկայնութիւնը մէկ մեթրօ Տաճկ. (իվիք երի) կ'ըսուի գիւղացիք ամառը հաւաքելով զայս անկողին կ'ընեն իր փափկութեան և հոտին համար և հետևաբար չորցնելով զայն ձմեռը կովերուն տակը կ'ցանեն ի վերջոյ աղբին հետ խառնելով պարարտացնելու համար։

Փադուղ Մրմեղի ծառի մի այլ տեսակն է։

Տօմուռ կամ դամոն Սալոր։

Մօճ Թուխս Տաճկ. (դուրթ կամ կօլչկայ)։

Իուպուղ Հաւի ձագ կամ վատեակ։

Կոչիլ Կրակը վառել արծարծել։

Սարսիլ Ջեմարան։

Ցիլնել Ցանել սերմանել։

Գանձիլ Կաշնի միջուկը։

ՎԱՆՑՈՒ ԲԱՌԵՐ

Ժարտադու	Դեղձ։
Մալաչեք	Տեսակ մը տանձ է զոր ձմեռուան կը պահեն։
Նռնիկի	Կանանչապոյն տանձ մի է զոր ուշեան վերջը կ'քաղեն կամ որվէչ կ'կախեն և կամ գետնի մէջ կ'մաղեն ուր հասուն– նալով կ'ղեղնի և կ'քաղցրանայ։
Գելապիկ	Հոտաւէտ անուշ խոշոր խնձոր մի է։
Ռուկ	Մանր և համեղ խնձոր մի է՝ ուռենիի տերեւի պէս չատ լինելուն և փոքրագիր ձևոյն համար այս անունը կ'տան։
Մազրակալ	Տես բամպակ Տահ. (ռաբաթայ)։
Ճղոր	Փոքր պտուղ։
Սամիր	Կամ և բրինձ միասին խառնելով կե– փնեն, երբ խանդրանայ վրան արդար իւղ դնելով կուտեն։
Դմիլայ	Կանանչ բանջար մի է զոր խաչելով իւղի և հաւկիթի հետ խառնելով կը տապկեն, ազուր ուտելիք մը կը լինի։
Կանճրաք	Յորենի նման հունտ մի է փշի վերայ կը բուսնի, որոյ հատիկները խաշելէն յետոյ սանդխի մէջ կ'ծեծեն և կամը հանելով որով պահոց մէջ ապուր և կամ ուրիշ տեսակ կերակուր կը պատ– րաստեն։
Դիւռ	Չնաման։
Ուհա	Տանուտէր և կամ գիւղի մեծը։
Զաւկիւղ	Գինի խմելու մեծ գաւաթ մ'է, որուն Տահ. (չինի քեաս) կ'ըսեն։
Լորիկ	Տեսակ մը սև խախտոց որուն հատիկները թէ մեծ և թէ փոքր կ'լինին մի ողկոյզի վրայ համը քաղցր է։

Շարունակելի)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱԶ. ՏՐ. ՎԱՐԴԱՆԵՍԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՄՈՒԼԱՑ

Թղմիրի համար	տարեկան	3 1/2	ոսկ. ֆունտ
» » Վիեննայ	»	2	» »
Ամբ վարժապետներուն	»	2 1/2	» »
Ա. Պօլսոյ եւ Փարր Ալիոյ	»	4	» »
» » »	»	2 1/2	» »
Ամբ. վարժապետներուն	»	3	» »
Թեւռատառաքի համար	»	8	ըռուպլի ներդրամ.
» » »	»	4	» »
Եւրոպայի	»	13	ֆրանք
» » »	»	9	»

ԿԱՆԽԻԿ Վ. ՃԱՐԵԼԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Կ. ՊՕԼԻՍ — Մեծ. Տիգրան էֆ. Հիւիէլեկեան իշխանապատուական ձեւոնէ Շուէնեէ Գապը Սկի ճաստէսի թիւ 20 :

Մեծ. Նշան էֆ. Գերպէրեան Լսմի Տապտիյէ ճաստէսի թիւ 61 :

ՄԱՂՆԻՍԱ — Մեծ. Սկրտիչ էֆ. Լրկանեան

ԼՕՏԷՐԻՇ — Մեծ. Տիրան էֆ. Պէնեէրլեան

ՍՄՄՈՆ — Մեծ. Լդ. էֆ. Մուրատեան

ԼՐԻՉՅ — եմ. Սարգիս էֆ. Ալեաեան

ՆՈՒՍՍԱՂԷՄ — Գեր. Տ. Մահակ եպսկ. Տապալեան

ԴԱՀԼԻԼ — Մեծ. Լարապետ էֆ. Դադասարեան

ՄԱՆՉՈՒԹԼՐ — Մեծ. Տիգրան Վարդեան

ՌՈՒՍՉՈՒՔ — Մեծ. Գաոնիկ էֆ. Հէօմիճեան

ՊՕՅԹՕՆ — Մեծ. Տիգրան Թաշճեան

Հասցէ

Մ. Մամուրեան
խմբ. Տիօրի. Ա. Մ–ը ի ԶՄԻՒՌՆԻԱ

M. Mamourian
Rédacteur de la Revue
« Arévélian Mamoul » SMYRNE

ՏՊԱՐԱՆ–ԳՐԱՏՈՒՆ

Մ. Մամուրեան

Մօտ - Փողոց Թիւ 3 (Մ. Ա.Ե.Լ.Ա.Ն.Ն. Ն.Ե.Ղ.Ը.Ա.Յ. Է.Ի.Մ.Ա.Ը)

ՏՊԱՐԱՆ *կ'ընդունի ամեն տեսակ տպագրական գործերու յանձնարարութիւններ :*

Կ'ունի — Գրքեր, Տեղեկագիրներ, Յայտարարութիւններ, Ծանուցումներ, Հաշուեցոյց, Ընկերագիր, Նամակագլուխ, Տոմսեր, Հարսնեւոնիս, Մահագր եւ այլն եւ այլն խիստ ամառն գիներով :

ԳՐԱՏՈՒՆ — *կ'ընդունի ամեն տեսակ հրատարակութեանց յանձնարարութիւններ։ Կ'գտնուի՝ ամեն տեսակ գիրք, դասագիրք, վէպ, Հայերէն, Անգլիերէն, Ծրանկերէն չեզուաւ։ Նոյնպէս դպրոցական տետրներ։*

Մեծահասակ դասագրերու վրայ երբ մեծահասակ գնուողներ չինին կարող է վճարել **20** *% է* **25** *% զեղչ բնել, իսկ գրավաճառներու համար մասնաւոր պայմաններ, երբոր տեղեկութիւնի խնդրուին։*

Թղթատուն ծախսն գնորդներու վրայ է։

Գրատան մէջ կ'գտնուին Մեծամեծ Ամերիկան հիմնարկի բոլոր դասագիրքերն, մեծահասակ գնորդներու վճարել **20** *% զեղչ առանց ճամբու կամ թղթատան ծախսի։*

Ամեն տեսակ եւ ամեն չեզուի հանդիսականերու եւ ծրագիրներու բաժանորդագրութիւնի ընդունուին առանց յանձնարարողիքի։

Ա. ՄԱՄՈՒՐԵԱՆ բաժանորդագրուին վարիչը կրնան դիմել Տպարան - Գրատուն։ Հինգ բաժանորդ գտնողի 1 տարեկան թիւ ձրի կ'տրուի։

Ա. Մ–ի մէջ ծանուցումներ եւս կ'ընդունուին խիստ ամառ գներով։

Ամեն տեսակ գործառնութենէ ճշմարիտ վճարումնիւ կանխիկ են, իսկ յանձնարարութենէ ճամբէն կանխաւճարք մ'առնուի։

Ա.ին ամեն Հեղինակներն ու Հրատարակիչներն որ կ'փափաքին իրենց երկերն Ա. Մ–ի մէջ ծանուցուած և գրատունս ցուցակիին մէջ ցուցադրուած տեսնել, պարտին Եր–ի–ն օրինակ մէկ երկել։

Հասցէ՝

Տպարան - Գրատուն

Մ. Մամուրեան — Իզմիր